սոյն փողը բերելու մասին, յիշեցնելով նրան, որ յիշեալ փողը չներկայացնելու դէպքում նա կզրկուի ոչ միայն պարտապանին այլ ևս բանտարկելու իրաւունքից, այլ ևայն պարտքից բաւականութիւն ստանալու իրաւունքից, որի համար բանտարկուած է պարտապանը։

63. Պարտատիրոջ մահուան դէպքում, այն յայտարարութիւնը, որի մասին յիշուած է նախընթաց 62 յօդւածում, հաղորդւում է նրա ժառանգներին նոյն նախազգուշութիւնով և նշանակելով նրանց երկու շաբթուայ ժամանակամիջոց՝ սննդադրամը ներկայացնելու համար։

64. Եթէ յետոյ պարտատէրը, կամ նրա ժառանգները, նրանց սոյն 62 և 93 յօդւածների հիման վրայ արած յայտարարութեան ժամանակից երկու շաբթուայ ընթացքում չեն ներկայացնի սննդադրամը, այն ժամանակ վերահսկողը ազատում է պարտատիրոջը բանտարկութիւնից, որի հետ

վերջինս ազատ է համարւում այն պարտքից, որի պատճառով զրկուած էր ազատութիւնից։

65. Սոյն 57 յօդուածում ցոյց տուած պատճառներով վերահսկողութիւնից ազատուած պարտատէրը՝ չի կարող երկրորդ անգամ ենթարկուել անձնական արգելքի միևնոյն պարտքի պատճառով։

---



# Ր Բ Ժ Շ Կ Ա Կ Ա Ն

**Արիւնհոսութիւն քթից:** Արիւնհոսութիւնը դադարեցնելու համար նախ պէտքէ հիւանդի գլուխը բարձր պահել. սառը ջուր կամ քացախախառն ջուր քթով ներս քաշել. քթանը սառցաջրում թըրջած դնել ճակատին․ քթի որ ծակից արիւն է հոսում, այն կողմի ձեռքը վեր բարձրացնել։ Թուլակազմ մարդկանց համար հարկաւոր է մաքուր օդ և սննդարար կերակուր։

**Արիւնհոսութիւն ընչափողից կամ թոքերից:** Պատահում է թոքախտի ժամանակ կամ նշան է թոքերի բորբոքման։ Հիւանդին պէտք է պարկեցնել ցուրտ սենեակում, հանգստացնել նրան, որ չվախենայ կոկորդի, կրծքի վերայ պէտքէ դնել սառցաջրում թրջած շոր։ Վերցնել մէկ թէյի գդալ հասարակ աղ և լցնել 1 $^1/_2$ բաժակ ջրի մէջ և տալ կում կում խմելու ամեն $^1/_4$ ժամ։ Հիւանդը շարժումներ չը

պէտքէ անէ, չպէտքէ խօսի և տաք ու գրգռիչ խմիչքներ խմէ։

**Թոքախտի դեղ**։ Պէտքէ վերցնել մի հացի գտալ կանեփի ծեծած սերմ և այնքան էլ հաճարի մաղած ալիւր և խառնել մի քիչ կաթի հետ։ Յետոյ պէտքէ վերցնել մի լիտր կաթ (մօտ 6 թէյի բաժակ) եռացնել և վերոյիշեալ խառնուրդի մէջ խառնելով, էլի մի քիչ եփ տալ և ապա միջից հանել կանեփի չեչը։ Ահա այսպէս եփածի կէսը պէտքէ տաք կամ պաղ խմել մի օրում, 1/4-ը առաւօտեան, միւս քառորդը երեկոյեան։ Համի բերելու համար, կարելի է մէջը մի քիչ աղ գցել։ Այս խմիչքը պէտքէ շարունակել մինչև հիւանդը կատարեալ գիրանայ. որքան գիրութիւնը աւելանայ, այնքան հիւանդութիւնը կպակասի։ Այս հասարակ սննդարար, ամենահեշտ և անվնաս դեղով բժիշկների քննած և անբուժելի համարած շատ հիւանդներ են բժշկուել։

**Թունաւորութիւն պղնձից, յանկարծակի**։ Հեշտութեամբ պատահում է



թունաւորութիւն պղնձից (мѣдь) երբ քացախալի կամ աղի կերակուրներ կամ թթու մրգեր են եփում պղնձէ կաթսայում կամ դրանց երկար ժամանակ թողնում են կաթսայում։

Թունաւորութեան նշանները, որոնք սովորաբար կերակուրը ուտելուց մի քանի ժամ յետոյ են երևում, հետևեալներն են. բերանում զգացւում է պղնձի համը, հիւանդը ործում է կանաչաւուն կամ կապտաւուն բաներ, զգում է խիստ փորացաւ, գլխացաւ, գլխի պտոյտ, ունենում է լուծ, որ յաճախ լինում է արիւնախառն։ Մորթն յաճախ դեղնում է։

**Խնամք**։ Ամենից առաջ տուր ործողական, ստամոքսից ամեն բան արտաքսելու համար, որ երբեմն ինքն իրեն է պատահում։ Եթէ թունաւորուածն ինքն իրան բաւարար չը ործայ, տուր ոսկետակի գինի (вино рвотнаго корня) չափահասներին ամեն 10 րոպէ մէկ հացի գտալ, իսկ երեխաներին մէկ թէյի գտալ, մինչև ործալը։

Երբ ստամոքսը դատարկուած լինի, տուր 4 ձուի սպիտակուց կամ մէկ հացի գդալ մագնեզիա լուծած մէկ բաժակ ջրում:

**Թունաւորութիւն պանրից**: Երբեմն պատահում է թունաւորութիւն կծուած պանրից: Պանրի թունաւորութեան նշանները նման են ստամոքսացաւի (катарръ желудка) նշաններին, այն է փորացաւ, ործողութիւն, լուծ և ուշագնացութիւն:

**Խնամք**: Եթէ պանիրը նոր են կերել, պէտք է ընդունել ոսկետակի գինի (вино рвотнаго корня) չափահասները ամեն 10 րոպէ մի հացի գդալ, իսկ երեխաները մի թէյի գդալ:

**Լնդերը պնդացնելու միջոց**: Պէտք է մէկ թէյի գդալ տանինի փոշին խառնել մի հացի գդալ սպիրտի մէջ և լցնել եփ տուած ջրով բաժակի մէջ ու առաւօտ և երեկոյ դրանով բերանը ողողել:

**Անքնութեան դէմ նոր միջոց**: Եգեր պրոֆեսորը հաստատում է, որ ուղտի մազը ջղերի վրայ այնպիսի հանգստացնող ազդե-



ցութիւն է անում, որ անքնութեամբ տանջուողները հեշտութեամբ այդ ցաւից կազատուեն, եթէ ուղտի կաշուց և մազից պատրաստած բարձ գործածեն:

**Մարմնի այրուածքի դէմ միջոց**: Թեթև այրուածքի համար պէտք է մի գդալ սոդա խառնել մի բաժակ ջրի մէջ, շորը թրջել այս խառնուրդի մէջ և դնել այրուած տեղերի վրայ, շուտ շուտ փոխելով: Սա ամենալաւ և կտրուկ դեղն է այրուածքի համար, ուստի անհրաժեշտ է ամեն ընտանիքի, մանաւանդ երեխաներ ունեցողներին, այս դեղից պատրաստի ունենալ: Անգլիացի բժիշկ Դոլը խորհուրդ է տալիս նաև օրը երկու — երեք անգամ քաթանը կաթի մէջ թրջել և դնել վէրքի վերայ, որից այրուածքը կմաքրուի և վէրքը 4—5 օր յետոյ բոլորովին կառողջանայ:

**Ատամի փտելու դէմ դեղ**: Մի բժիշկ առաջարկում է հետևեալ հասարակ միջոցը. պէտք է վերցնել փետուրէ գրչի ծայրով մէկ կամ երկու ցորենահատ ծեծած պաղ-

լեղ շիպ. և լցնել փտած ատամի մէջ, երբ պաղլեղը լուծուի, ցաւն էլ կանգնի: Եթէ ատամի ցաւը նորից սկսուելու լինի, պէտք է այս դեղը նորից կրկնել. այսպիսով ոչ միայն ցաւը կը կտրուի, այլև ատամի փտելը կդադարի:

**Մազմուածքը պնդացնելու միջոց:** Պէտք է վերցնել 15 դոյլ գետի ջուր և մէջը խառնել 10 դրուանքայ պղնձի խալտուպք, 2 դրուանքայ մաքրած ծծումբ, 2 դր. բորակ [սելիտրա] և կէս դր. արջասպ [սապոնի կուպարոս]: Այս բոլորը կէս ժամ շարունակ խառնելուց և պաղեցնելուց յետոյ, պէտք է գործածել որպէս սառը լոգարան:

**Ոտների կոշտերի [մոզոլի] դէմ միջոց:** Պէտք է վերցնել մոմի ճրագուն հաւասար չափով խառնել մաղած կաւճի հետ և շորի վերայ քսած դնել կոշտերի վերայ: Բացի այս, կոշտերը հեշտութեամբ անհետանում են, եթէ կոշտի մեծութեամբ, թունդ քացախի մէջ 3—4 օր թրջած հասարակ սոխի կտոր դրուի կոշտի վերայ:



**Կոծիծ կամ գորտնուկ:** Եթէ կոթը կամ արմատը երկարաւուն է, պէտք է թելով ամուր կապել և սպասել մինչև որ կոծիծը վայր ընկնի:

Եթէ կոկիծը լայնանիստ է, պէտք է ամեն օր այրել բորակական թթուով [азотная кислота] կամ աւելի լաւ է արմատով կտրել և հանել տալ, երբեմն էլ կարելի է լինում կապել:

**Սրտախառնութիւն:** Պատահում է ստամոքսի խանգարմունքից, որ առաջանում է շատ ուտելուց կամ դժուարամարս կերակուրներից: Դժուարամարս կերակուրներից սովորաբար պատահում է ործողութիւն: Նրբակազմների [օրինակ կանանց] հետ հեշտութեամբ պատահում է սրտախառնութիւն և ործողութիւն հոգեկան վրդովմունքից: Այդպիսի դէպքերում օգնում է խշշափոշին (шипучій порошекъ) կամ հարկաւոր դէպքում 5 կաթիլ ափիոնի ոգեթրմոցը [настой опія]: Յաճախ պատահում է սրտախառնութիւն յղութեան ժամանակ, այն

էլ առաւօտեան ժամերին։ Այդպիսի դէպքերում վերկենալուց առաջ պէտք է խմել սուրճ։ Եթէ սրտախառնութիւնն անընդհատ շարունակւում է, ա՛ռ բերանդ սառոյցի կտորներ կամ խմիր սառը ջուր կում կում։ Եթէ դրանցից չանցնի սրտախառնութիւնը, ընդունիր ջրով 10—20 կաթիլ Հոֆմանի կաթիլ (эфиръ со спиртомъ)։

**Բերանի գարշահոտութիւն.** Այս հոտը կտրելու համար ամենալաւ միջոցն այն է, որ բերանը ողողեն ուռիտական թթուով (салициловая кислата) գրչահատի ծայրով վերցնել և լցնել մի շիշ ջրում, վերմանգանական կալիով (марганцово-кислій кали)։ Այս վերջին դեղից լուծիր կէս թէյի գտալ մէկ շիշ ջրի մէջ և այդ լուծուածքից ածիր մէկ բաժակ ջրի մէջ 1—2 թէյի գտալ և ողողիր բերանը օրական մի քանի անգամ։

**Քոր մորթու.** Մորթը զանազան տեղերում կարող է քոր գալ ցանից (сыпъ) չոր քոսից, տափակաւուն կծիկներից և,



այլն։ Քորը լինում է երբեմն այնքան սաստիկ, որ քնելը լինում է անկարելի։

**Խնամք.** Եթէ մորթը քոր է գալիս առանց նրան երևալու, լողացիր մի քանի օր տաք ջրում, քսելով սապոն և լողանալուց յետոյ ածա վրադ սառը ջուր։ Բացի դրանից քոր եկող տեղերի վերայ քսիր՝ քաղցրիտ (գլիցերին)։

**Կարմիր քամի.** Սա մորթու մի տեսակ բորբոքումն է. մորթը կարմրում է, ուռչում է ձգւում և փայլում։ Երբեմն գոյանում է բշտիկներ։ Երբեմն կարմիր քամուց առաջ զգացւում է ընդհանուր թուլութիւն և ջերմ։ Բորբոքումն անցնելուց յետոյ ուռոյցն սկսում է անհետանալ, մորթն սկսում է թեփ տալ և քոր գալ։ Կարմիր քամին փոփոխական է. դա առանձին վտանգաւոր է, երբ յայտնւում է գլխի վերայ։

**Խնամք։**—Դիր հիւանդացած տեղերի վերայ ձէթով բամբակ, կամ քսիր քափուրի ձէթ (камфорное масло) և վրայից դիր բամբակ։ Տաքութեան համար տուր խմելու

սառը ջուր, քինաքինա: Եթէ դէլն է տա-լիս դիր ճակատին սառը քաթան:

**Ստամոքսի խանգարումն.** Այս հի-ւանդութիւնը պատահում է երբ ստամոքսը լցնում են մեծ քանակութեամբ դիւրա-մարս կամ դժուարամարս կերակուրներով, ոգելից անչափ խմիչքներով: Դրանից գոյանում է խիստ անախորժ զգացմունք, գլխացաւ, ախորժակի պակասութիւն, սըր-տախառնութիւն և զգայռումն (բնկալն):

**Խնամք:-** Պէտքէ քաղցած մնալ մինչև ախորժակը նորից բացուի: Օգտաւէտ է խմել հայրորակաջուր (содовая вода) մէկ դտալ լուծած մի բաժակ ջրում: Պէտք է ընդունել 5-10 կաթիլ ափիոնի ոգեթրմոց (насной опія):

**Պտուկների ճաքելը.-** Այն կանայք, որոնց պտուկները շատ նուրբ են, ծիծ տալուց առաջ նպատակայարմար է քսել պտուկներին սեր, քաղցր նշի իւղ, ձիթենու ձէթ: Եթէ պտուկը ծիծ տալուս խիստ զգայուն է, պէտքէ պտուկի վերայ հագցնել



ռեզինի գնտակ, որ առանձնապէս դրա հա-մար պատրաստում են և այդ պտուկից սակայ ծիծ տալ: Եթէ երեխան չի ծծում այդ պտուկից, չը պէտքէ գործածել այդ գնտակը և պտուկի ճաքած տեղերի վերայ դնել աղաղաջրի փաթեթ (10 գրան արաղ -таннн. լուծած մի բաժակ ջրում): Այս վերջին դէպքում ամեն անգամ ծիծ տա-լուց առաջ պէտք է պտուկը լուանալ:

**Ուշագնացութիւն երեխաների.—** Երեխայի շնչառութիւնն յանկարծ կտրւումէ, երեսը կապտում է, աչքերը դուրս են պը-ծնում: Ուշագնացութիւն , պատահում է և խառւկի, խզուկի և օտար մարմիններ կլա-նելուս:

**Խնամք:—** Երեխային բարձրացրու, ճկտիր մատդ բերանի խորքը և խտուտ ածելով ործացրու, միևնոյն ժամանակ էլ հանիր մատով մաղասը, որ կիտուած է լինում բերանում: Սրսկիր երեսին ջուր:

**Քթի հոսառութիւն վերականգնե-լու միջոց:—** Պէտքէ վերցնել ճակնդեղ

(свекольный сокъ) հիւթ և հետը խառնել քիչ քանակութեամբ մեղր և քսել քթի մէջ։ Մի քանի անգամ այսպէս կրկնելով, քթի հատաառւթիւնը նորից բոլորովին կվերականգնի։

**Լեարդի ցաւին** — լաւ օգնում է հետեւեալ խառնուրդը. 3 մաս կարմիր կաղամբի թերթեր մանր կտրատած, երկու շիշ ջրի մէջ եփել այնքան, մինչև որ կէս շիշ մնայ. յետոյ հետը խառնել $^1/_4$ֆունտ սպիտակ մեղր (չէչը մաքրած)։ Պէտք է այս խառնուրդը առաւօտ և երեկոյ միջակ բաժակով խմել։

**Ցրտինքի զարկուածութեան դէմ ամենալաւ միջոցն է այրած շիք** (квасны)։ Ցրտնած տեղերի վերայ ցանել շատ բարակ, իսկոյն վատ հոտը կանցնի, անվտանգ կմնայ և առողջութիւնը։

**Ձեռների եւ ոտների ճրտինքի դէմ.** — Ոչ մի դեղ այնքան շուտ չի կարող վերջնականապէս բժշկել ձեռքերի և ոտների քրտինքը, ինչպէս, եօդի թրմոցը [настой-



ка іоди] որը պէտք է քսել ձեռքերի և ոտների տակ. Երբեմն մի անգամ քսելը [օրական մի անգամ] բաւական է վերջնականապէս անհետացնելու քրտինքը։

**Մատնացունչի** (ноготоѣда) **դէմ ամենակտրուկ միջոց.** — Պէտքէ վերցնել կապարային քացախ (свинцовый уксусъ) 15 մաս, գլիցերին 15 մաս, վարդի ջուր 100 մաս, դափնեկեռասի (лаврово вишня) կաթիլներ քսան մաս իրար խառնել։ Ցաւած մատը օրական մի քանի ժամ պահել այդ խառնորդի մէջ. մատի ցաւը կդադարի և հիւանդութիւնը այլևս առաջ չի գնայ։

**Մազերի թափուելու դէմ ամենափորձած միջոց.** — Գործ է ածւում հետեւալը. $16^1/_2$ մսխալ տաւարի ոսկրի ուղեղ, $6^1/_2$ մսխալ ոխզականնեփի ճէթ (косторка) $^1/_2$ մսխ. աղաղ (таннинъ), արօմատնիյ իւղ 5-10 կաթիլ, խառնել իրար և քսել մազերին։

## ԺԻ. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

### Առողջապահական կանոններ

1. Թէ գիշերը և թէ ցերեկը թարմ օդ ծծելն առողջութեան հիմնական պայմանն և թոքերի հիւանդութիւնից պաշտպանուելու լաւագոյն միջոցն է։

2. Շարժումնը կեանք է։ Ամենօրեայ շարժումները բացօդեայ մանկալուց մարմնամարզութիւնից առաջացած—ընդդիմադրում է անշարժութեան վնասակար ազդեցութեանը։

3. Չափաւորութիւն և պարզութիւն պահպանելը ուտելեղենի և խմիչքեղենի մէջ երկար ու առողջ կեանքի լաւագոյն պաշտպանութիւնն ու ապահովութիւնն է։ Նա, ով ջուրը, կաթը և մրգեղէնը գերադասում է արաղից գինուց, նպաստում է իր առողջութեան աւելանալուն, աշխատելու հնարաւորութեան և բարեկեցութեան։

4. Հագուստը չպէտք է չափազանց նեղ քնքշացնելու չափ տաք լինի։



5. Առողջարար բնակարանը պէտք է լինի արևային, չոր, լայն, մաքուր, լուսաւոր, ախորժելի և յարմար։

6, Ամեն բանի խիստ մաքրութիւնը—օդի, կերակրի, ջրի, հացի, սպիտակեղէնի, հագուստի, բնակարանի և այլն, կցելով — սրանց նաև բարոյականութիւնը՝ պարզութեան հետ միասին ծառայում է որպէս լաւագոյն միջոց խոլերայից, տիֆից, դիֆտերիտից, մի խօսքով՝ բոլոր վարակիչ հիւանդութիւններից պաշտպանուելու համար։

7. Քունը գիշերուան համար է, իսկ ցերեկուայ ազատ ժամերն աւելի լաւ է ընտանիքին և հոգեկան պահանջներին բաւականութիւն տալուն նուիրել։

8. Հալալ աշխատանքով, ազնիւ վարք ու բարքով առողջամիտ բերկրանքներով համեմած բեղմնաւոր կեանք—ահա առողջութեան հիմնաւոր պայմանը։ Ազնիւ ձգտումներ ունենալ, հայրենիքի պարտքը ճանաչող հաւատարիմ քաղաքացի լինել, — այդ

ամենը կեանքին տալիս են արժէքաւոր բովանդակութիւն։





## ԻII ՏՆԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

**Տները** մկներից ազատ պահելու համար փոխանակ կատուի և կամ զանազան թունաւոր միջոցներ գործածելու, հարկաւոր է հետեւալ հասարակ միջոցը։ Այն տեղերը, որտեղ մկներ կան, պէտք է անկիւններում կամ արկղների, աթոռների տակ ցանել օչօչի (բամաշկի) ծաղիկ. մկների համար բոլորովին անտանելի է այդ հոտը և միանգամայն փախչում են դրանից։

**Խալիչաների եւ բրդէ գործուածքների թանաքի բծերի հանելը.** Քանի դեռ թանաքի բիծը թաց է ու չէ ծծուել, պէտք է աշխատել ծծողական թղթով կամ բամբակի ծայրով չորացնել թանաքը. յետոյ վերան պէտք է լցնել հում կաթ և բամբակով սրբել ու այսպէս շարունակել այնքան որ բիծը բոլորովին չորանայ, պէտք է դարձեալ կաթ լցնել վերան թողնել՝ և մի քանի ժամանակ վերան թողնել և յետոյ բամբակով մաքրել։

**Դէմքը** աւելի սպիտակ պահելու համար, պէտք է լուացուել ջրով, հետը խառնած կորեկի (гречневая) ալիւր:

**Լայկովի ձեռնոցները մաքրելու միջոց**:— Պէտքէ վերցնել 1 մաս սկիպիտար և 2 մաս բենզեն իրար խառնել և սրբել ձեռնոցների կեղտոտ տեղերը:

**Մաքուր** սկիպիտարի հետ խառնել խոզի ճարպը և ապակէ ամանով լամպայի վերայ տաքացնել մինչև խառնուլը և մինչև չորանալը տրորել կուրծքը և մէջքը երբ մրսել է, կամ հազում է. մի երկու անգամ կրկնելուց մրսածները և ցաւերը բոլորովին կանհետանան:

**Միսը** մի քանի օր պահելու համար, պէտքէ կտրտել մի քանի կտոր. այնպէս որ մի փունտը անել 3 կամ 4 կտոր, դնել կաւէ կամ փայտէ ամանի մէջ, վերան բարակ աղ անել, իսկ յետոյ մի կամ երկու մատի հաստութեամբ ածուխի փոշի ցանել վերան. այդ ձեւով պահուած միսը եփելուց առաջ պէտքէ լաւ մաքրել ածուխը: Միսը



այնքան թարմ մնացած կլինի, որ դժուար կլինի որոշել նոր մսից:

**Եթէ մազերը** շատ իւղոտ են եւ փայլում են, պէտքէ լուանալ թունդ թէյով հետը խառնած ռոմ կամ միայն թէյով:

**Շորերից կեղտերը հանելու միջոց**:— Վերցնել ամենալաւ կարտոֆիլի ալիւր և խառնել ջրի մէջ. այս խառնուրդը քսել շորի կեղտոտ տեղերի վերայ և թողնել մինչև չորանալը: Իսկ իւղոտ կեղտերը մաքրելու համար ամենալաւ միջոցը հետեւեալ խառնուրդն է. լցնել ամանի մէջ այրած մագնեզիա (жженная магнезія) վերան լցնել բենզին և խառնել, որ դառնայ մածուցիկ, ոչ այնքան ջրի: Այս խառնուրդը քսել կեղտոտ տեղերի վերայ և թողնել մինչև չորանալը: Եթէ առաջին անգամ քսելուց կեղտերը չմաքրուին, պէտք է կրկնել և երկրորդ անգամ, որից յետոյ անմիջապէս մաքրուած կլինին կեղտերը:

**Սպիտակեղէնը** կեղտից լուանալիս շուտ մաքրելու համար պէտքէ շորերը եփելիս

կէս փութ չորին խառնել մի հացի գդալ ֆրանսիական սկիպիդար։

**Մետաքսէ** գործուածքները մաքրելու համար պէտք է նախ լուանալ թէյի ջրի մէջ, յետոյ արաղով, որի մէջ պէտք է խառնած լինի մի քիչ շաքար, դեռ չչորացած պէտք է հարթել։

**Բորբոսնելու դէմ.** — Այն պահարաններում, որտեղ վտանգ կայ բորբոսնելու, պէտք է հոտաւէտ որև է հեղուկ պահել բաց ամանով. սկիպիդարը աւելի լաւ է ներգործում։

**Ձուկը** հեշտ է մաքրւում, եթէ մի րոպէ տաք ջրի մէջ գցուի։

**Պինդ** միսը փափկանում է, եթէ այն ջրի մէջ, որի մէջ եփւում է, մի քիչ քացախ խառնուի։

**Մետաղներ մաքրելու բաղադրութիւններ։** Մետաղներ մաքրելու համար նշանակուած օծանելիքը կարելի է պատրաստել հետևեալ ձևով։

Հալեցնում են 5 մաս դեղին վազելին կամ



խոզի ճարպ և խառնում են հետը 1 մաս կոլկոտար։

**Սևացած ոսկեղէն իրերը** ստանում են կրկին իրանց փայլը երբ նրանց դնում են եփ տուած սապոնաջրի մէջը, լուանում են մաքուր ջրով և սրբում են մահուդով։

**Ոսկեզօծած շրջանակներ մաքրելու համար։** Ոսկեզօծած շրջանակները պէտք է մաքրել մեծ զգուշութիւնով, ըստորում նրանց վրայի ոսկին շատ բարակ շերտ ունի։ Եթէ շրջանակը աղտոտել են ճանճերը, այն ժամանակ լաւ միջոցն է խառնել նաշատիրի ջրի 10 մասը 40 մաս ջրի մէջ հալեցրած սպանիական սապոնի հետ 1 մաս սապոնի մանրուքը 3 մաս ջրի մէջ։ Խառնուրդի մէջ թաթախում են բամբակը և թեթև կերպով քսում են շրջանակի վրայ, մինչև որ նա մաքրուի և փայլ ստանայ։

**Ռետինէ կրկնակօշիկների տակը կաշի կպցնելու համար.** Պէտք է պատ-

րաստել հետևեալ խառնուրդը. առնել 6 մինչ 8 մաս կաուչուկի կտորտանքներ կամ հին կրկնակօշիկների բետին և 100 մաս քարածուխի բենզին։ Այդ խառնուրդը պահում են սրուակի մէջ, շուտ-շուտ ցնցելով։ Այդ խառնուրդով կպցնում են կաշին կրնակօշիկների տակ։

**Նաշատիրը տնականի գործածութեան համար:** Նաշատիրի ցքիի շատ թոյլ ջրախառնուրդով կարելի է ոչնչացնել հագուստի վրայ գտնուող իւղի բծերը, դրա համար այդ խառնուրդով թրջած տեղի վերայ դնում են սպիտակ ծծողական թուղթ և նրա վրայ քսում են տաքացրած ութոն։ Նաշատիրի և սկիպիտարի հաւասարաչափ խառնուրդը հանում է մինչև անգամ շատ հնացած ներկի բծերը, սեղանի երեք գդալ նշատիրը, խառնած մի վեդրօյ գոլ ջրի հետ. ամենայաւ հեղանիւթ է դռներ և լուսամուտներ մաքրելու համար նոյն խառնուրդը սրսկելով, կարելի է մաքրել գորգեր։



ԳԱՐԵԳԻՆ ԵՊ. ՍՐՎԱՆՁՏԵԱՆ

*Մահուան տասնամեակի առթիւ (†1892 մ.նոյ.17)*



## VIII ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

*Լուսամուտից ցած կամ կրակի մէջ մի թքիր, թաշկինակդ գործածիր և վերան չնայած, ծածկիր. շատ շատ թքելն էլ անքաղաքավարութիւն է։*

*Մարդու առաջ մի քորուիր, մազերդ մի շիտկիր, դա մեծ անքաղաքավարութիւն է։*

*Մատերովդ քիթդ մի խառնիր, որ զզուելի բան է. եթէ քիթդ սրբելու լինիս, թաշկինակդ գործածիր և այնպէս արա, որ քթիցդ չվազէ. սրբելու ժամանակ զգոյշ կաց քիթդ ձայն չհանէ. քիթը վեր քաշելը ևս շատ անքաղաքավարի բան է։*

*Ձեռքդ կամ թաշկինակդ երեսիդ կամ բերանիդ բռնիր և այնպէս փռշտայ, զգոյշ կաց թուքդ նստողների կամ քո վերայ չթացնես. ամուր փռշտալն էլ անքաղաքավարութիւն է։*

*Եղունգներդ մարդու ներկայութեամբ մի կրծիր, գանելիք բաների վերայ մի խօսիր։*

*Մարդու առաջ ատամներդ մի խառնիր,*

եղունգները մի կտրիր և վերաց գլուխդ մի շփակիր։
Եթէ ձեռքերդ կեղտոտ է, նայիր, որ մէկի երեսին, ձեռքին, շորերին չդիպցնես. դրանով թէ կոպտութիւն արած կլինես և թէ շորերը կըկեղտոտես։
Նայիր, որ չյօրանջես, քթիդ տակից բան չերգես, չշուացնես. եթէ յօրանջելու լինես, ձեռքդ կամ թաշկինակդ բերանիդ բռնիր և այնպէս յօրանջիր։
Մարդու մէջ մրափելը, ոտքերը երկարացնել ու պառկելը քաղաքավարութիւնից դուրս բան է, եթէ այդպէս անես, դրանով քո ձանձրանալը ցոյց կտաս նստողներին. այդպէս անելու փոխարէն, շատ լաւ կլինի վերկենաս ու գնաս։
Ոտքերդ շարժելով, անշնորհք շարժումներ անելով բարձր ձայնով մի խնդար, ճակատդ մի կնճռիր, տարակուսածի պէս դէմքով մի նայիր բանի վերայ, վերջապէս այդ րոպէին սիրտդ ինչպէս է, այնպէս էլ դէմքդ ցոյց տուր։



Ով կուզէ լինի, խոժոռ աչքերով, արհամարական հայեացքով մի նայիր. խոժոռ աչքերով նայելը մեծերին է վայել։
Խմելու բանից ջոկ, բերանդ ուրիշ բաներ մի առնիր և նրանով մի խաղ անիր։

**Քաղաքավարութիւն խօսակցութեան ժամանակ.**—Ճառախօսութիւն մի անիր, խօսքի տեղը չեղած, մի խօսիր. շատախօսը լսողին նեղութիւն է պատճառում։ Մինչև քեզ բան չհարցնեն, մի խօսիր և միշտ պատասխան տուած մարդու պատուին նայելով, «պարոն, տիկին, յարգելի պարոն, յարգելի տիկին, օրիորդ», այս խօսքերով սկսիր։
Միշտ զուարթ երես եղիր, ինչ մարդկանց հետ լինիս, նրանց պատիւ տուր, միշտ քաղաքավարութեամբ և զգուշութեամբ խօսիր հետները. եթէ քեզ հետ խօսելու համար մէկը քեզ մօտ գայ, ոտքի կանգնիր։
Նայիր, որ երկդիմի հասկացող բառերից յետոյ պարոն, տիկին, օրիորդ չասես. օրինակ «ի՞նչ ասել է խաղ, պարոն. որն՞ է աղ-

ուէս, տիկին» և այլն։ Բարձր ձայնով մի խօսիր, մանաւանդ քեզանից մեծերի հետ։

Եթէ մօտդ մարդիկ կան, մարդու ականջից բան մի ասիր. եթէ երկու հոգի ցած ձայնով առանձին կխօսին, դու մի ուրեէ պատճառ բռնիր և հեռացիր մօտերից։

Քեզանից մեծի խօսքին մի խառնուիր, մէկի խօսքը մի կտրիր, քեզանից մեծ մարդու ասածին «ճշմարիտ է» ասելով վկայութիւն մի տար. աշխատիր, որքան կարելի է դու քեզ վերայ քիչ խօսիս. եթէ ծիծաղելու բան ես պատմում, առաջ դու մի ծիծաղիր։

Մարդու սուտ հանելուց վատ բան չկայ, մանաւանդ երբ խօսած բանի մասին քեզ չեն հարցնում։

Ուրիշին ծիծաղեցնելու կամ դու քեզ հանճարեղ ցոյց տալու համար մարդու վերայ մի ծաղրիր, ընկերներիդ հետ էլ երբ կատակ ես անում, այնպէս արա, որ սրտերը չծակես։ Կատակի համբերող եղիր։



# IX ԱՍՏՂԱԲԱՇԽԱԿԱՆ

## Արեւ

**Արեւի տեսքը.**— Պարզ օրը արեւի լոյսը այնքան շլացուցիչ է, որ անկարելի է, համարակ աչքով նայել նորա վրայ. բայց երբեմն, երբ երկինքը ամպամած է լինում՝ կամ լաւ ես, երբ արեւը իր մայր մտնելուց առաջ սուես խորասուզւում է երկրի երեկոյեան գոլորշիացումների մէջ, նորա փայլը այնքան է թուլանում, որ նրան կարելի է դիտել անվտանգ և այն ժամանակը նա ունենում է հրային շրջանի տեսք, ուստի և կոչւում է արեւի սկաւառակ (դիսկ)։ Ընկքում մարդ կարող է կարծել թէ արեւը ջիլուաէ կլոր սեղանի երեսի պէս կլոր ու տափակ է, այն ինչ՝ իսկապէս արեւը երկրի պէս գնդի ձև ունի։

Սակայն ինչպիսի գունդ։ Ի՞նչ ահագին մեծութիւն ունի այս հրաշէկ ռումբը։ Բայց կասէք դուք, արեւը ամենեւին այդքան մեծ չէ երեւում մեր աչքին։ Նրա սկաւառակը

համարեա նոյն մեծութեան է թւում մեզ, ինչ մեծութեան է լրացած լուսինը։ Եթէ արևի գունդը այդքան մեծ է, ապա ինչու նա մեծ տարածութիւն չէ բռնում երկնքումը։ Դրա պատճառը այն է, որ արևը շատ հեռու է մեզնից։ Ինչքան մի առարկայ շատ է հեռու մեզնից, այնքան նա փոքր է թւում մեզ։

## Արեւի հեռաւորութիւնը երկրից

Արևը գտնւում է երկրից մի անչափելի, զարհուրեցուցիչ հեռաւորութեան՝վրայ. 140 միլիօն վերստ։ Իւրաքանչիւր միլիօն վերստը պէտքէ կրկնել հարիւր քառասուն անգամ։

Կարո՞ղ էք դուք կազմել ձեզ համար մի որքան և պարզ հասկացողութիւն սրա մասին։ Ո՞չ ապաքէն անգամ միայն մէկ միլիօն վերստ հեռաւորութիւնը անհասանելի է ձեր երևակայութեանը՝ Այդպիսի մեծ թւերը բացի նրանից որ «շա՜տ ու շա՜տ հեռո՜ւ է» ուրիշ ոչինչ չեն տալիս ձեզ առար-



կաների մեծութեան մասին։

Փորձե՛նք, սակայն, կազմել մի՝ հնար եղածին չափ աւելի լաւ հասկացողութիւն այսպիսի չափազանց մեծ հեռաւորութեան մասին՝ մի քանի այլ օրինակների օգնութեամբ։ Երևակայենք օրինակ մի երկաթուղի, ձգուած մեզնից մինչև արևը, որի վրայով սլանում է բոլոր ուժով սուրհանդակի գնացքը, կանգ չառնելով ոչ ցերեկը, ոչ գիշերը . . . Ահա նրան կհարկաւորուէր երեք հարիւր տարի արևին հասնելու համար։ Եթէ այդ գնացքը այս րոպէիս ուղևորուէր դէպի արևը, այն ժամանակ ուղևորները կարող էին վերադառնալ այնտեղից, մեզ համար լուրեր բերելով, միայն վեց հարիւր տարի անցնելուց յետոյ... Հարկ չկայ ասելու, որ մեր ուղևորները, ինչպէս և նոյն իսկ ուղևորութիւնը լոկ մի ցնորք է. բաւական ժամանակ կայ, որ մարդ կարողանայ տասն անգամ մեռնել ու ծնուել ճանապարհին։

Կամ լաւ եւ ենթադրենք, որ մի ռումբ

են արձակել թնդանօթից դէպի արեւը։ Ռումբը երկու վայրկենում թռչում է մօտ մի վերստ... Եւ այնպէս եթէ նա կարողանար թռչել դէպի արեւը ոչ մի տեղ կանգ չառնելով և չդադարեցնելով իւր թռիչքի արագութիւնը, այն ժամանակ արեւին հասնելու համար նրան կհարկաւորուէր ինն տարի ու ինն ամիս, համարեա տա՛ս տարի։ Այժմ մտածեցէք. եթէ, չնայելով այսպիսի հեռաւորութեանը, արեւը մեր աչքին դեռ եւ բաւական մեծ է երեւում, հապա որքան մեծ պէտք է լինի նա իսկապէս։

**Արեւի մեծութիւնը.**— Հաշուելով արեւի հեռաւորութիւնը երկրից, գիտնականները կարողացել են ստոյգ ապացոյցների հիման վրայ ճշտութեամբ հաշուել և այն լուսաւորի մեծութիւնը։ Արեւի տրամագիծը հաւասար է 1, 300, 000 վերստի, որ տալիս է մի շրջագիծ աւելի քան չորս միլիոն վերստ երկայնութեամբ։ Չորս միլիոն վերստ շրջապատ։ Սա հօ, ուղիղ 109 մեր մոլորակի շրջապատն է, այն միևնոյն երկրի, որին մենք այնքան ընդարձակ ենք համարում։ Արեւի ծաւալը 1 միլիոն 300 հազար անգամ աւելի է երկրի ծաւալից. ուրիշ խօսքերով կը հարկաւորուէր մեր երկրի նման 1,300,000 գունդ գլորել մի տեղ, որ կազմուէր մի այնպիսի գունդ, որ իր մեծութեամբ հաւասարուէր արեւին։ Զանի՜նք արդեօք դարձնել մի համեմատութիւն։ Մէկ ըմպանակ (կրուժկա) ցորենի մէջ պարունակւում է մօտ տասը հազար հատիկ միջին մեծութեան. մի վեդրոյի մէջ կլինի տասն անգամ աւելի, այսինքն՝ հարիւր հազար, իսկ 13 վեդրոյում—էլի 13 անգամ աւելի, այսինքն 1,300,000 հատիկ։ Եւ այսպէս երեւակայեցէք, որ ձեր առաջը դրուած է մի կողմից միայն մի հատիկ ցորէն, իսկ միւս կողմից—13 վեդրոյ ցորէն և ասացէք ձեր մէջը. «ահա այս մէկ ցորենը մեր երկիրն է, իսկ 13 վեդրոն արեւը»։ Ուրեմն մենք լիուամբ կարող ենք ասել՝ որ մեր երկիրը համեմատելով մի այսպիսի ահագին գնդի հետ, մի չնչին գնդակ է, հա-

մարեան մի աւազահատիկ։ Եթէ աւելացնենք արևին կամ հանենք նրանից մեր երկրի մեծութիւնը,—միևնոյն է մեր 13 վեդրոյ ջրենի մէջ մի հատիկ աւելի կլինի թէ պակաս։ Այդ մինչև անգամ անկարելի կլինէր նկատել։

Ուղիղ այսպէս էլ կարելի է հաշուել արևի կշիռը։ Երևակայեցէք մի հսկայական կշիռ, աշխարհներ կշռելու կշիռ... Մի թաթի վրայ դրուած է արևը։ Կշիռը հաւասարակշռելու համար՝ պէտք է միւս թաթի վրայ դնել 324,000 երկրագունդ։ Ահա թէ ինչպիսի լուսաւոր է այն լուսաւորը, որին հին ազգերը երևակայում էին օդի մէջ, մի քիչ ամպերից բարձր գլորող մի փոքրիկ հրային անիւ կամ մի քառաձի կառք։ Չորս ձի ու մի գունդ, որ համարեա 1,300,000 անգամ մեծ է երկրից։

**Արևի բծերը.**— Ներկայ ժամանակում ձեռք գարնելով երևոյթների բացատրութեանը, ուշի ուշով դիտում են և համբերութեամբ չափում են։ Լուսաւոր մարմին-



ների դիտողութեան համար աստղաբաշխները ունին դիտելու խողովակներ, սրանք ահագին հեռադիտակներ են, որոնց մէջ առարկաները հարիւր ու հազար անգամ աւելի մեծ են երևում մեր աչքին՝ առանց գործիքի երևացածից։ Դիտելով արևը այսպիսի գործիքներից մէկով, ամենից առաջ նկատում են, որ նրա մակերևոյթը ամեն տեղ միակերպ չէ լուսաւորուած։ Շատ յաճախ նրա վրայ նկատւում են բծեր. ասես թէ պայծառ, ճաճանչափայլ սկաւառակի վրայ գրուած են մութ ամպեր։

Այս բծերը ամենևին մթին տարածութիւններ չեն, նրանք միայն նուազ փայլուն են և մթին են երևում միայն իրանց շրջապատող շլացուցիչ մակերևոյթի համեմատութեամբ։ Եթէ, յիրաւի, այնպէս կարողանայինք անել, որ աչքը չտեսնէր սկաւառակի մնացած մասը, այն ժամանակ մակերևոյթի այդ տեղերը մեզ կերևային շատ փայլուն, թէպէտ և նրանց շրջապատող մակերևոյթից նուազ աստիճանի։ Այս բծերը

լինում են խիստ բազմազան ձևի ու մեծու-
թեան. Նրանք աւելի քան տասն անգամ
ամբողջ երկրի մակերևոյթից մեծ տարա-
ծութիւն ունեն։ Երբեմն տեսանելի են լի-
նում մի քանի բծեր, երբեմն էլ ոչ մէկն
էլ չէ երևում. Նրանցից մի քանիսը աւելի
են մնացած, իսկ մի քանիսը թափանցիկ։
Երևում է, ինչպէս նրանք կազմւում, աճում,
փոփոխւում են իրանց ձևն ու աստիճանա-
բար անյայտանում։

**Արեւի մակերեւոյթը.** — Որովհետև բը-
ծերը փոփոխում են իրանց տեղը, ան-
յայտանում ու նորից երևան գալիս, ապա,
այս պատճառով նրանք ոչ էլ՝ կազմում են
որև է մեծ կարծր նիւթեր, որոնք այնպէս
զետեղուած լինին արևի մակերևոյթի մէջ
տեղը, ինչպէս լեռները կախուած են մեր
ցամաքների վրայ կամ ինչպէս առաջ են
շարժւում կղզիների խմբերը ովկիանոսի
մէջ տեղը։

Բացի նորանից, հեռադիտակի մէջ*) ե-

*) Չպէտք է նայել արևին փոքրիկ հեռա-



րևացող արևի մակերևոյթը երևում է մեզ
ինչպէս մի շառաչող ծով։ Երևում են ասես
թէ նրա վրայ թաւալուող ահագին ալիքներ,
միմեանց ետևից վազելիս և փոխադարձա-
բար միմեանց մղելիս՝ ինչպէս ծովի ալիք-
ները փոթորկի ժամանակ։ Բայց սրանք
բոցեղէն ալիքներ են։ Եւ յիրաւի, մեր դի-
տած մակերևոյթը ասես թէ մի հրային
թաղանթ է, որ բաղկացած է վառուող ու
լուսաւորող թեթև գազերից և շրջապատում
է ամեն կողմից այն ահագին գնդի զան-
գուածը, որ նուազ լուսաւոր է, ըստ ամե-
նայն հաւանականութեան հեղուկ է։ Այս
թաղանթը, այս փայլուն մթնոլորտը գըտ-
նւում է անդադար յուզման մէջ, նման հող-
մակոծուած բոցի։ Ժամանակ առ ժամա-
նակ նրա մէջ թաղում են ահագին հրային
վիժումներ. տեղ տեղ գոլորշիների մըրիկը,
որոնք ասես թէ դուրս են պատռւում կրա-
կի այս մթնոլորտի խորքից բարձրանում

դիտակով, առանց նախապէս ապակին մըրո-
տելու, եթէ ոչ այլապէս կարելի է կուրանալ։

է հրաշէկ մակերևոյթի միջովը, որ ճեղքճղքւում, պատառոտւում է և ասես թէ բոցի մէջ բացուածք է կազմում։ Դիտելով այս բացուածքները, տեսել են որ նրանք ունին ձագարի ձև, որի փորուածքը՝ համեմատելով բոլորովին շլացուցիչ լոյս ունեցող եզերքների հետ, մութն է։ Դրանք են ահա որ կազմում են արևի այն բծերը, որ մենք նկատում ենք նրա սկաւառակի վրայ։

**Արևի ջերմութիւնը** — Արևի իւրաքանչիւր վայրկեանում արձակած ջերմութիւնը հաւասար է 660 բիլիոն փութ միանգամից վառուած քարածուխի արձակած բոլոր ջերմութեանը։ Գիտնականների հետազօտութեամբ արևի ջերմութեան աստիճանը 7000 է. որի միայն $^{1}/_{500}$ միլիոն երրորդ մասն է խլում մեր երկիրը բուսական և կենդանական կեանքը պահպանելու համար։

**Արևի երևացած շարժողութիւնը.** Ուշադրութեամբ դիտելով արևի բծերը մի քանի օրուայ ընթացքում, նկատում են, որ



նրանց՝ սկաւառակի վրայ բռնած տեղերը շարունակ փոփոխւում են։ Նրանք ասես թէ գնում են մակերևոյթի վրայովը և ամենքը դէպի միևնոյն կողմը։ Եթէ, օրինակ, նշան դնենք եզերքի մօտ եղած բծերից մէկի վրայ, ապա շուտով կը տեսնենք, որ նա օր ըստ օրէ շարժւում է դէպի սկաւառակի մէջ տեղը և կը հասնի նրան մօտաւորապէս եօթն օրուայ ընթացքում. յետոյ գնալով միշտ միևնոյն ուղղութեամբ՝ երկրորդ շաբաթուայ վերջը բիծը կանյայտանայ հակադիր կողմը։ Երկու շաբաթից յետոյ միևնոյն բիծը նորից լոյս կ՚ընկնի և նորից կըսկսի իր առաջուայ ճանապարհը, եթէ միայն չի ոչնչանայ։ Երբ մի քանի բծեր են լինում, այն ժամանակ նրանք կատարում են իրանց ճանապարհորդութիւնը ամենքը միատեղ, ինչպէս երկրային գընդի (գլոբուսի) վրայ նկարուած կղզիների խմբերը, երբ այդ գունդը պտտւում է մեր առաջը իր առանցքի վրայ։ Այստեղից կարելի է եզրակացնել որ արևը երկրի պէս,

նոյնպէս պտտւում է իր շուրջը. բծերը պըտտւում են արևի հետ միասին։ Իմանալու համար թէ այդ լուսաւորը որքան ժամանակ է գործ դնում իր ամբողջ պտոյտի վրայ, բաւական է նկատել թէ որքան ժամանակ է հարկաւոր որ՝ որևէ բիծ նորից վերադառնայ իր առաջուայ տեղը։ Անելով մի այսպիսի դիտողութիւն ամենայն անհրաժեշտ զգուշութեամբ՝ իմացել են, որ արևը իր լրիւ պտոյտը անում է մօտաւորապէս 25 1/2 օրում—մի փոքր պակաս մի ամսից։ Այսպէս ուրեմն նա աւելի դանդաղ է պտտւում քան երկիրը։

Միտ դնելով այս բոլոր դիտողութիւններին, մենք կարող ենք այժմ երևակայել արևը իբրև տարածութեան մէջ առանձնացած մի անբովանդակելի պտտւող գունդ, հեղուկ ու հրաշէկ՝ ինչպէս բովքից արտավիժւող հալուած ձուլածոյերկաթ (չուգուն) շրջապատուած՝ մշտնջենական փոթորկից սաստկապէս հողմակոծուած մի բոցեղէն մթնոլորտով։ Ի՜նչպիսի անհաւատալի ջեր-



մութիւն՝ այսպիսի մի հրեղէն ծովի մէջ։ Ջերմութիւն, որ հազար անգամ բարձր աստիճանի է, քան հալուած կապարի, պղնձի, արծաթի ջերմութիւնը։ Ինչպէս օդի մէջ կախ արած հրաշէկ ռումբը տալիս է իրան շրջապատող օդին իր ջերմութիւնն ու փայլը, այնպէս էլ այս ահագին հրային գունդը ճառագայթաբէս արձակում է իրան շրջապատող տարածութեան մէջ ջերմութեան ու լոյսի մի անչափելի քանակութիւն։ Պտտւելով նրա առաջը՝ մեր երկիրը տաքանում է ու լուսաւորւում, ինչպէս տաքանում են, օրինակ բորբոքուած հնոցի առաջը։ Սակայն երկիրը համեմատաբար այնքան փոքր ու այնքան է հեռացած արևից, որ նրան այս բոլոր տաքութիւնից միայն սաստիկ թոյլ մաս է բաժին ընկնում։ Բայց մեզ այդ չնչին մասն էլ շատ բաւական է։ Չնայելով իր սարսափելի հեռաւորութեանը՝ ամառը պարզ եղանակին, կէս օրին մօտ, երբ արևը արձակում է իր ճառագայթները բաւական ջերմ

էն լինում։ — Եթէ մենք աւելի մօտ լինէինք արևին, նա աւելի մեծ կթուար, բայց միևնոյն ժամանակ մենք կկուրանայինք նրա չափազանց զօրեղ լոյսից. մենք կայրուէինք, կխորովուէինք։ Եթէ մենք աւելի հեռացած լինէինք, այն ժամանակը, ընդհակառակն, այդ լուսաւորի սկաւառակը մեզ փոքր կթուար, մենք չէինք կարողանայ այնպէս պարզ տեսնել, և ցուրտ կզգայինք։ —Եթէ էլի հեռանայինք, աւելի հեռու լինէինք, արևը մեզ կերևար միայն ինչպէս գիշերային բիւրաւոր աստղերի մէջ կորչող մի փոքրիկ աստղ։

Բայց ի՞նչ կը լինէր այն ժամանակ մեր երկրի բնակիչներիս հալը։ Ի՞նչպէս կը կառավարուէինք մենք առանց արևի։ Արևը —դա ջերմութեան և լոյսի մեծ աղբիւրն է։ Նրանից առաջ է գալիս մեզ համար ցերեկը։ Նրա ջերմութիւնը գոլորշիացնում է ովկիանոսների ջրերը՝ նրանցից ամպեր կազմելու համար, նրանցից ցած են թափւում երկրի վրայ բարերար անձրևներ. Նա



գրգռում է հատիկների աճեցողութիւնը, բոյսերի հասկը, ծաղիկների փթիթը, մրգերի հասունութիւնը, նա քշում է ձիւները և գարնանը վերադարձնում է կանաչը մարգերին ու անտառներին... Եւ. առանց նրան մենք խորասուզուած կլինէինք մի սարսափելի, յաւիտենական գիշերուայ մէջ. մենք կը բռնուէինք մահացուցիչ ցրտից։ Ամեն բան կոչնչանար—թէ՛ կենդանիներն ու թէ բոյսերը։ Նոյնպէս և մենք ինքներս որովհետև ոչ մի բան չի կարող ապրել առանց լոյսի ու տաքութեան։ Երկիրը կըդառնար մի սառուցեալ ու անբնակ անապատ։

# X. ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

—Բախտը անյուսալի բարեկամ է:

—Գիտութիւնը ճանապարհ է բաց անում մարդու առաջ, իսկ հաւատը առաջնորդում է նրան:

—Հայրենիքի ծուխը—օտարութեան կըրակից լուսաւոր է:

—Սիրիր հայրենիքդ, այդ ամրապնդում է քո ոյժերը և պարգևում է խաղաղութիւն քո հոգուն:

—Օգտուիր ներկայով, գուշակիր ապագադ և յիշիր անցեալդ:

—Սիրել, կառավարել, վարձատրել և պատժել—ահա գլխաւոր պարտականութիւնը ծնողների:

—Մարդս ամենից աւելի անազնիւ կերպով իր Աստծու հետ է վարւում, որովհետև Աստուած անսխալ է և անչափ բարեգութ: (Նիցշէ)

—Սիրտդ մաքուր պահիր, որ կեղտոտուեց էլ չի կարող մաքրուել:



—Կան մարդիկ, որոնք նման են բանկային տոմսերի. նրանք ընդունւում են ոչ թէ իրանց իսկական արժողութեամբ, այլ կուրսի համեմատ: (Լարոշ Ֆուկօ)

—Բարեկամին փորձում է կարիքը, իսկ իմաստունին բարկութիւնը:

—Սայթաքելու համար մի քայլն էլ հերիք է: (Լեսսինգ)

—Եղիր կամքիդ տէրը և խղճիդ ստրուկը:

—Ամեն մէկի համար կեանքն է թանգ, բայց ազնիւ մարդու համար կեանքից էլ թանգը պատիւն է: (Շէքսպիր)

—Ճշմարտութիւնը նոյն է, ինչ որ թունդ գինին, նրան չպէտք է ի չարը գործ դնել. (Գ. Հայնէ)

—Յարգանք դէպի ուրիշները—դա աշխարհիս բարձր առաքինութիւնն է: (Հ. Զուդերման)

—Մեր արատները սկզբում անցորդներ են, յետոյ հիւրեր, և վերջ ի վերջոյ տէրեր: (Թալմուդ)

—Ով չի կարող չքաւորութիւնը տանել,

նա ծնուած է ստրկութեան համար։ (Ջենիէ)

—Տնտեսիր ժամանակը—դա այն գործուածքն է, որից կարուած է կեանքը։ (Ֆրանկլին)

—Պատերազմի ինչ լինելը կարող է իմանալ միայն նա, ում որդին պատերազմի դաշտում է գտնւում։ (Ժ. Դը-Մեստր)

—Ասուած է. «ով իւր անձը կբարձրացնի, նա կը խոնարհուի». իսկ մարդիկ կարդում են. «ով ուրիշներին խոնարհեցնի, ինքն ամենից բարձր կլինի»: (Սենկեւիչ)

—Սէրը սրտի արեգակն է։ (Ֆլամարիօն)

—Որքա՜ն թշուառ են քիչ համբերութիւն ունեցողները։ (Շէքսպիր)

—Երեխաները երկրի կենդանի ծաղիկներն են։ (Մակսիմ Գորկ)

—Ներքին երկպառակութիւնը աւելի մեծ վտանգ է սպառնում, քան թէ արտաքին թշնամին։ (Րաֆֆի)

—Կան մարդիկ, որոնց մահն աւելի փառաւոր է, քան թէ նրանց կեանքը։ (Րաֆֆի)



# XI. ԳՐՉԻ ՀԱՆԱՔՆԵՐ

## Մեծութեան աթոռ

Ես գիտեմ կեանքում աթոռ մեծութեան.
Խաչեր ու աստղեր շարէշա՜ր վերան...
Ով այդ աթոռին հասնել ուզենայ,
Երկու յատկութիւն պէտք է ունենայ—
Մեծի առջև խոնարհուե՜լ, դողա՜լ...
Մեծի յետևից կամացո՜ւկ սողալ...

## Հ ա յ Ե ւ ր ո պ ա ց ի

(Մեր աղայական տիպերից)

Էշն էն էշն է—փալանն է փոխել։
Ժող. խօս.

Երէկ հագին հին արխալուղ,
Ոտքին—ջորաբ, տրեխ ու քօշ,
Մականունն էր «եզան գլուխ»,
Կերած ճաշը—սոխ ու լօշ։

Ցունը — տուն չէր, այլ հաւի բուն,
Քընում աղտոտ պուճախում.
Արհեստ չունէր — նա օրն ի բուն
Ձու էր ածում, ձու ծախում։

Այսօր տեսէ՛ք, նա մեծ մարդ է
Համ ապրուստով, համ շորով.
Ում տուն մըտնի — նա տան զարդ է
Իր լի՛ ջէբով, լի՛ փորով։

Ասիական կեանքն է ատում,
Եւրոպայով շըլացած,
Առանց լաքէյ հաց չի ուտում,
Սոխն ու լօշը մոռացած։

Սէյր անելիս փողոցներում
Քիթն է ցըցում միշտ վերև.
Ինքն առաջին չի բարևում,
Բարևներն են բազմաձև՛։

Գինդ հագում է, բարձր խօսում,
Հաշուով շարժում ձեռ ու ոտ.
Ուրիշին է խելք քարոզում,
Ինքը խելքի միշտ կարօտ։



«Ծըկլի աղն» է իրան կարծում
Ցարգանք, պատիւ սպասում.
Ազգի կեանքում, ամեն գործում
Դեր խաղալ է միշտ ուզում։

Հօգին կըտայ, որ քիթ խոթի
Հասարակաց գործի մէջ.
Հէնց որ խոթեց, Տէրն ազատի,
Անսանձ «ես»-ին չկայ վերջ»։

Բայց ինչի՞ հայ եւրոպային
Խօսքի, վէճի ըռնուելիս,
Ա՛յնքան սիրում էշի քացին
Եւ քացի է միշտ տալիս...

Ի՞նչի... թէ որ լաւ միտք անէք,
Հէ՛չ չպէտք է զարմանալ —
Փալան փոխած էշը երբէք
Ազնիւ նըժոյգ չի դառնալ։

## «Ջուխտը» եւ «կենտը»

Մարդը տըգեղ կոշտ ու կոպիտ,
Հոգին՝ դատա՜րկ. ջեբը՝ լի՜ք.
Գին է առել ծաղկափըթիթ,
Իբրև ձեռքի խաղալի՜կ...

Արշի՜ն, հաշի՜ւ մարդու գլխում,
Ուշ ու միտքը փողի մէջ.
Սիրոյ ծարաւ կընկայ սըրտում,
Երազներին չկայ վերջ...

Կեանք են անցնում մի յարկի տակ,
Բայց սրտերով խորթ իրար.
Տարբե՜ր ձըգտում, տարբե՜ր ճաշակ,
Կինը—կըրա՜կ, մարդը—քա՜ր...

Եւ նայելով ես այդ զոյգին
Միտք եմ անում—թէ մի օր
«Ջուխտի» կողքին...«կենտը» բոնի...
Ո՞վ է արդեօք մեղաւոր...

Ա. Ծատուրեան



# XII ԿԱՆԱՆՑ ԿԱԵՆՔԻՑ

## ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ

—Կնոջ տղամարդութիւնը նրա կանացիութեան մէջն է։

—Ամենամեծ բարիքը, որ կարող է Աստուած մարդուս տալ, դա բարի, առաքինի և պարկեշտ կինն է։

—Մօրս դաստիարակութեան ոճը ոչ թէ արուեստ, այլ սէր էր, և դրա համար անսխալ էր։ (Լամարտին)

—Կնոջ բարի անունը այնքան քնքոյշ բան է, որ պէտք է վախենալ ամենափոքր քամուց անգամ։

—Կինը մի գերազանց դաստիարակ է, որովհետև սիրով ու գթով է դաստիարակում։

—Սիրելին կնոջ շնորքն է, և ոչ գեղեցկութիւնը։

—Ամենաաղքատ տունն անգամ, որտեղ իշխում է մի առաքինի և ժիր կին, դառնումէ հանգստութեան և երջանկութեան օթևան։

## ԻՆՉ՞ՊԷՍ ՊԷՏՔ Է ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՆԵԼ

Բալերենին.— Ես խնդրում եմ ի ձեր ոտը՝

Գործակատար օրիորդին.— Չէ՞ք կարող արդեօք ծախել ինձ վրայ ձեր սիրտը։

Դերձակուհուն.— Կարեցէ՛ք մեր սրտերը իրար հետ յաւիտեան։

Հեռագրատան մէջ ծառայող օրիորդին.— Ես կամենում եմ հեռագիր ուղարկել ձեր սրտին. կընդունէ՞ք արդեօք։

Բժշկուհուն.—Բուժեցէք սրտիս տանջանքները։

## Ո՞Ր ԿԻՆԸ ԻՆՉՊԻՍԻ ՆԱՄԱԿԻ Է ՆՄԱՆ

Ամուսնացած կինը նման է ըստ պատկանելոյն հասած նամակի։

Օրիորդը—դեռ չուղարկուած նամակի։

Այրի կինը նման է մի նամակի, որի ստացողը հեռացել է և ուրիշներն են կարդում։



Պառաւ օրիորդը նման է ցպահանջ նամակի, որը մոռացուած է փոստում։

## ԿԻՆԸ ԴԱՌՆՈՒՄ Է

Փաստաբան—երբ իւր անձը մեղադրանքից է պաշտպանում։

Դատախազ երբ մեղադրում է ամուսնուն։

Դատաւոր—երբ ընկերուհիների գործերն է քննում։

Բանաստեղծ—երբ առաջին տեսակցութիւնն է ունենում։

Դերասանուհի--երբ հասարակութեան մէջ է։

Գեղարուեստագէտ—երբ արդ ու զարդի հետ է լինում։

Պատմաբան—երբ իւր յաղթանակներն է թւում։

Աշխարհագրագէտ—երբ արտասահմանեան դերձակուհիներն ու վաճառանոցներն է յիշում։

Սիրող ամուսին—երբ մարդը բացակայ է։

Ճշմարտասէր—երբ մեռնում է։

## ԲԱԽՏԱՒՈՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՕՐԱՑՈՅՑ

Աստղագիտութեամբ պարապող մի քանի Ֆրանսիացի հետազօտողների կարծիքով ամուսնանալու համար գոյութիւն ունին բախտաւոր և դժբախտ օրեր: Նրանց գիտողութեան համաձայն, ամենից աւելի բախտաւոր օրեր ամուսնանալու համար պէտք է համարել·

| | |
|---|---|
| Յունուարի | 1. 3. 10. 19. 31ը: |
| Փետրուարի | 1, 3, 10, 21. |
| Մարտի | 3, 5, 12, 20, 23. |
| Ապրիլի | 2, 4, 12, 20, 22. |
| Մայիսի | 2, 4, 12, 20, 23. |
| Յունիսի | 1, 3, 12, 19, 21. |
| Յուլիսի | 1, 15, 19, 28. 31 |
| Օգոստոսի | 2, 11, 18, 20, 30. |
| Սեպտեմբերի | 1, 4, 16, 23, 28, |
| Հոկտեմբերի | 1, 8, 15, 17, 27, 29. |
| Նոյեմբերի | 5, 11, 13, 22, 25. |
| Դեկտեմբերի | 1, 8, 10, 19, 23, 29. |



## Ա ն տ ա ն ե լ ի   կ ի ն ը

(Հրէական աւանդութիւն)

Մարդու մէկը Աստծուն գանգատ գնաց: Աղերսում էր, խնդրում, որ ազատի իրան կնոջ ձեռքից, որովհետև անհնար է նրա հետ ապրել: Աստուած չլսեց նրա խնդիրը, ասաց.—Այդ անկարելի է, չեմ հաւատում, որովհետև ստեղծածներիս մէջ ամենագեղեցիկ արարածը կինն է:

Մարդը ցաւած սրտով յետ դարձաւ ու սկսեց իր կնոջ հետ նորից կեանք վարել: Այդ կեանքը այնքան դառն էր և անտանելի, որ վերջին ծայր յուսահատութիւնից ստիպուած, նա նորից դիմեց Աստծուն առաջին խնդրով բայց դարձեալ մերժում ստացաւ: Այդ միջոցին Աստծու մօտ կանգնած էր Միքայէլ հրեշտակապետը. նա էլ հաստատեց Աստծու ասածը.—Այո, կինը մի գեղեցիկ հրաշալի արարած է, ես ես չեմ հաւատում, նա այնքան անտանելի լինի, որ նրա հետ ապրելը անկարելի լինի:

Աստուած ասաց Միքայէլ հրեշտակապետին.—Որովհետև կնոջը պաշտպան հանդիսացար, տալիս եմ քեզ 25 տարի ժամանակ, գնա՛, ապրիր երկրի վրայ, ինքդ անձամբ փորձիր կնոջը, նրա բնաւորութիւնը և նշանակած ժամանակը անցնելուց յետոյ հետևանքի մասին հաղորդիր ինձ։

Հրեշտակապետը իջաւ երկիր, ամուսնացաւ և մի որդի ունեցաւ։ Սկզբում երկու ամուսինների կեանքը անցնում էր երջանիկ սակայն այդ երջանկութեան հետևեցին դառն օրեր. Կինը իւր վարմունքներով այնաստիճան թունաւորեց հրեշտակապետի կեանքը, որ այլևս անկարող լինելով համբերել, դիմեց Աստծուն.

—Տէ՛ր Աստուած, ազատի՛ր ինձ կին արարածից. խոստովանում եմ սխալս. այժմ անձամբ փորձեցի այդ գեղեցիկ երևացող արարածին։ Իսկապէս համբերել դրան, անկարելի է, դա մի հրէշ է։ Ուր կուզես, ուղարկիր, ինչ կուզես յանձնիր, միայն ազատիր գլուխս այդ դժուարութիւնից։



—Ո՛չ, դու դեռ համբերի՛ր, 25 տարիդ դեռ չես վերջացրել. ժամանակդ լրացնելուց յետոյ, ես քեզ կկանչեմ։ Միքայէլ հրեշտակապետը կորագլուխ յետ դարձաւ։ Այնուհետև թէ ինչ տեսարաններ ունեցաւ կնոջ հետ, ինչ դժոխային տանջանքներ քաշեց 25 տարուայ ընթացքում, աննկարագրելի էր։ Վերջապէս հասաւ երջանիկ րոպէն, լրացաւ 25 տարին։ Մինչդեռ անպատմելի ցնծութեամբ հրեշտակապետը պատրաստւում էր հրաժեշտ տալ իւր երկրաւոր տաժանակիր կեանքին և օր առաջ իւր շունչը փչել, կանչեց որդուն իր հայրական վերջին խրատը տալու և ասաց.

—Որդիս, ինձանից յետոյ ոչնչով չպարապես, միայն բժիշկ դարձի՛ր, այս է իմ ցանկութիւնը։

—Ի՞նչպէս բժիշկ դառնամ, քանի որ գիտութիւն չունիմ, բժշկել չգիտեմ։

—Ասում եմ քեզ բժիշկ դարձի՛ր, ես քեզ կօգնեմ։ Դէ՜հ լսի՛ր։ Երբ քեզ կհրաւիրեն հիւանդի մօտ, իսկոյն ուշադրութիւն դար-

ձրու, թէ ես որտեղ եմ կանգնած։ Եթէ հիւանդի ոտնատակումն եմ, դեղի տեղ հասարակ ջուր էլ տաս հիւանդին, նա կառողջանայ։ Իսկ եթէ հիւանդի գլխատակում լինիմ կանգնած, իմացի՛ր, նրանից էլ յոյս չկայ, նա իմն է, չի առողջանայ։

—Այդպէս էլ արեց որդին. լսեց հօր խրատին։ Որ հիւանդին այցելում էր, բժշկում էր։ Եւ այսպէս նորա բժշկութեան հռչակը քանի գնաց տարածուեց և հասաւ մինչև անգամ հռոմայեցիների աշխարհը։

—Մի անգամ Հռոմի մեծազօր կայսրը մերձիմահ հիւանդացաւ։ Տեղական բժիշկները անկարող եղան բժշկել նորան։ Հրաւիրեցին Միքայէլ հրեշտակապետի որդուն որպէս հռչակաւոր բժիշկ։ Երբ նա մուտք գործեց հռոմէական պալատը, նրան առաջարկուեցաւ վերջնական պայման—անպատճառ բժշկել կայսրին, հակառակ դէպքում՝ նրա գլուխը կը կտրուի։ Բժիշկը զգաց իւր անելանելի դրութիւնը։ Ի՞նչ անէր, յետ դառնալ անհնար էր. ուստի դիմեց հօրը



աղերսանքով—հայր, շատ անգամ ինձ օգնել ես, այս անգամ էլ մի՛ թող ինձ անպաշտպան, աղաչում եմ, խնդրում, ազատի՛ր ինձ կորստից։ Հայրը դրական ոչինչ չպատասխանեց.—հիւանդի մօտ կըտեսնուենք—ասաց ու անյայտացաւ։

Որդին ներս մտաւ։ Մի օրհասական սարսուռ անցաւ նրա անդամներով, երբ նկատեց հօրը հիւանդի գլխատակում նստած։ Նա զգաց իր անխուսափելի կորուստը, բայց չկորցրեց իրան։ Մի հրաշալի միտք ծագեց նրա գլխում. հնարագէտ որդին առանց տատանուելու մօտեցաւ հրեշտակապետին և ականջում փսփսաց—Հայրի՛կ, մայրի՛կն եկաւ, մայրի՛կը։—Հրեշտակապետը հէնց որ լսեց կնոջ անունը, թողեց հիւանդին և կայծակի արագութեամբ դուրս փախաւ տնից։ Հիւանդը իսկոյն առողջացաւ և հնարագէտ բժիշկը փրկուած էր։

## XIII. ՓՈՐՁԱՌՈՒ ՐԻՇԱՐԻ ԽՐԱՏՆԵՐԸ
### կամ
### Հարստանալու ճանապարհ

«Եթէ մէկը ձեզ ասի, թէ կարելի է հարստանալ առանց աշխատանքի և խնայողութեան, մի՛ք հաւատալ նրան. նա թունաւորիչ է»։(Ֆրանկլին)

Համաձայնեցէք, սիրելի կարդացողներ, որ ոչինչ բան այնքան ախորժելի չէ կարող լինել մի հեղինակի, որքան հանդիպելն ուրիշի շարադրութեան կամ քարոզի մէջ իւր սեփական գաղափարների հակումն ունենալն և մատնանիշ անելն։ Այս պատճառով դուք կարող էք եզրակացնել, թէ որքան ես բաղդաւոր էի զգում ինձ՝ ականատես լինելով այն անցքին, որը մտադիր եմ ձեզ պատմել։

Մի քանի օր սրանից առաջ ես անցնում էի մի խումբ մարդկանց միջով. կանգնեցնելով իմ ձին, տեղեկացայ, որ այդ մարդիկը ժողվուել են աճրդախօսութեան



(տօրգի) նպատակով։ Աճրդախօսութիւնը դեռ չ'սկսուած, նրանք վիճում էին զանազան հարցերի, գլխաւորապէս ներկայ ժամանակի դժուարութիւնների մասին։

Ներկայ գտնուողներից մէկը, մօտենալով մի պատշաճ հագնուած ծերունու՝ ասաց. «Ինչ էք կարծում դուք, հայրիկ, ներկայ ժամանակիս վերայ. ճշմարիտ չէ՞, որ ծանր հարկերը բոլորովին քանդում են մեր երկիրը և մենք դժուարանում ենք վճարել, դուք փորձուած մարդ էք. ինչ խորհուրդ կտաք սրա առաջն առնելու համար»։

Ծերունին փոքր ինչ մտածելուց յետոյ, պատասխանեց. «եթէ այդ մասին դուք ցանկանում էք իմանալ իմ կարծիքը, ես կասեմ ձեզ կարճ խօսքերով, ինչպէս և ասում է փորձառու Րիշարը «ճշմարտութիւնը շատախօսութեան կարօտ չէ»։

Այստեղ խումբը շրջապատեց ծերունուն, խնդրելով, որ նա բացատրի իւր առածները և նա շարունակեց.

«Ձեր բողոքը իրաւացի է, իմ բարեկամ-

նել, ճշմարիտ, որ հարկերը ծանր են. միայն եթէ մենք վճարէինք այնքան, որքան կառավարութիւնն է պահանջում, այն ժամանակ, գոնէ, կարելի էր մի կերպով հեշտացնել դժուարութիւնները. բայց կան և այնպիսի հարկեր, որոնք սաստիկ ծանր են մեզանից շատերի համար. զօրօրինակ. մենք վճարում ենք երկու անգամ շատ մեր ծուլութեանը, երեք անգամ մեր հպարտութեանը, չորս անգամ՝ մեր անխոհեմութեանը. այս հարկերի համար չենք կարող պահանջել՝ ոչ ժամանակ և ոչ չափաւորութիւն. բայց յուսահատուել հարկաւոր չէ, եթէ մենք կըհետեւենք փորձառու Րիչարդի խրատներին։ «Օգնիր քեզ դու ինքդ», ասում էր նա, «Աստուած էլ քեզ կօգնի»։ Ուրեմն լսեցէք։

I. Մի որ և իցէ կառավարութիւն եթէ պահանջում է իւր հպատակներից իրանց ժամանակի մէկ տասներորդ մասն, այդ մենք անարդարութիւն ենք համարում, բայց մենք մեր ծուլութիւնով աւելի շատ ժա-



մանակ ենք կորցնում։ Պարապութիւնից առաջանում են շատ հիւանդութիւններ, որոնք կարճացնում են մարդուս կեանքը։ Պարապութիւնը ժանգից աւելի է ուտում մարդուն, քան թէ գործը։

«Բանալիքը փայլում է, քանի որ նա գործածութեան մէջ է գտնւում» ասում էր փորձառու Րիչարդը։

«Եթէ դուք սիրում էք կեանքը», աւելացրեց նա, «ուրեմն մի՛ք կորցնիլ ժամանակը. նա մէկ թել է, որից բաղկանում է մեր կեանքը։ Ո՜րքան աւելորդ ժամանակ ենք կորցնում մենք, մոռանալով, որ քընած աղուէսը հաւ չի՛ բռնում, և թէ մենք երկար ժամանակ կունենանք քնելու գերեզմանի մէջ»։

Եթէ ժամանակը մի ամենաթանկագին գանձ է, ուրեմն նրան կորցնել, կնշանակէ անձնատուր լինել աններելի շռայլութեան։ Կորցրած ժամանակն էլ չի՛ վերադառնում. որքան էլ նա շատ լինի, մեզ քիչ կերևայ»։

Ուրեմն դէպի գործ։ Եթէ սկսենք ջա-

նասխրութեամբ գործել, շատ բան կըշինենք փոքր աշխատանքով։ Գործունեայ մարդու համար աշխատանքը (ֆիզիկական) զգալի չէ։

«Պարապութեան սովորութիւնը բոլոր զբաղմունքը ծանրացնում է. իսկ աշխատանքինը՝ թեթևացնում։ Ով ուշ է արթնանում քնից, նա իւր բոլոր օրն անց է կացնում պարապութեան մէջ, իսկ երեկոյեան սկսում է աշխատել։ Ծուլութիւնն այնպէս կամաց է քայլում, որ աշխատութիւնը շուտով է հասնում յետևից։ Դու ինքդ հարկադրիր քո գործերին, մի սպասիր, որ նոքա քեզ հարկադրեն։ Վաղ արթնացիր, վաղ քնիր, կըլինես առողջ, հարուստ, միշտ պարզ մտքով և զուարթ դէմքով»։ Այս բոլորն նոյնպէս փորձառու Րիչարդի խօսքերն են։

Ու արդարև. ինչ կընշանակէ անդադար սպասել և յուսալ մի յաջող ժամանակի, քանի որ մեր ապագան մեր սեփական ձեռքին է։ Հարկաւոր է գործել, ոչ թէ



երևակայել և յուսալ. ով միայն յուսով է ապրում, նա քաղցածութիւնից կը մեռնի. առանց աշխատանքի մարդ չի վարձատրւում։ Եթէ դու մի կտոր հող ունիս կամ չունես, մի և նոյն է, դու պէտք է աշխատես. իսկ եթէ ունիս և գործ չը դնես քո աշխատանքը նրան մշակելու, այն ժամանակ նա կանցնի հարկահանի կամ պարտատիրոջ ձեռքը։ Ամեն մի արհեստ և ամեն մի տեսակ կանոնաւոր պարապմունք մի անսպառ աղբիւր է, որից բղխում է օգուտ և յարգանք. բայց պէտք է և հետևել մի որոշ նպատակի, առանց որի իզուր կըկորչեն մեր բոլոր աշխատանքը։ Եթէ մենք աշխատասէր ենք, երբէք չըպէտք է վախենանք անյաջողութիւններից. որովհետև սովը նայում է միայն աշխատաւորի բնակարանին, բայց չի համարձակւում ներս սողալ. նոյնպէս ներս չի մտնում աշխատաւորի բնակարանը ոչ պարտատէրը և ոչ ոստիկանութիւնը։ Պատճառը շատ պարզ է. աշխատանքը մարդուն տալիս է կարողու-

թիւն վճարելու իր պարտքերը. իսկ հակառակ դէպքում, ծուլութիւնը և յուսահատութիւնը բազմապատկում են իր պարտքերի քանակութիւնը։

Մի՛ յուսաք, որ գանձ կը գտնէք, կամ ժամանակին ժառանգութիւն կստանաք. աշխատանքի ճիշտ հետևանքը՝ երջանկութիւնն է. Աստուած էլ օգնում աշխատաւորին։ Ուրեմն աշխատեցէք անդադար և այն միջոցում, երբ շատերն իրանց նուիրել են քնի, դուք զուարճալի կերպով բաւականութիւն կստանաք և առատ կը վարձատրուիք։—Էսօրուայ գործերը հէնց էսօր վերջացրէք, որովհետև չէք կարող իմանալ թէ վաղը ինչ կըպատահի. «Մէկ էս օրը», ասում է փորձառու Րիշարը, «արժէ երկու էգուցուայ. էս օրուայ գործը վաղուան մի՛ք ձգիլ, քանի որ կարող էք էս օր կատարի՛լ»։

Եթէ դուք մի բարի մարդու ծառայ լինէիք, իհարկէ ձեզ համար ամօթ կլինէր, եթէ նա միշտ տեսնէր ձեզ պարապութեան



մէջ։ Դուք բոլորեքեանդ ձեր ծառաներն էք. ամաչեցէք ուրեմն ձեզանից ձեր պարապութեան համար. ամաչեցէք նոյնպէս ձեռքներդ ծալած նստել, երբ դուք շատ գործեր ունիք թէ ձեր սեփական, թէ ընտանեկան և թէ հայրենիքի վերաբերեալ։ Մի՛ք արհամարհիլ աշխատանքը, ինչ տեսակ էլ որ նա լինի. մի՛ք պահպանիլ ձեր ձեռքերը անգործածութեան մէջ. անխոնջ աշխատանքով պարապեցէք ձեր գործերով, և մի՛ք մոռանալ, որ կատուն ձեռնոցներով մուկ չի բռնում։

Ճշմարիտ է, որ այս շատ հեշտ բան չէ և կարելի է, որ ձեր ոյժն աւելի թոյլ է, իսկ ձեր ձեռքերն անսովոր են աշխատելու. բայց մի՛ք յուսահատուի. հաստատ յուսով հրաշքներ կը գործէք. ժամանակը յաղթում է բոլորին, ջուրը կաթելով ծակում է քարը. մուկը կրծելով կտրում է հաստ պարանը. կացնի թոյլ հարուածից գլորւում են դարևոր կաղնիները։

Մի քանիսը, գուցէ հարցնեն. «մի՞թէ

մարդ մի րոպէ չպէտք է հանգստանայ»։ Նրանց կըպատասխանեմ դարձեալ փորձառու Րիչարդի խօսքերով. «իմացիր ժամանակի գործածութիւնը ինչպէս հարկն է, եթէ կամենում ես հանգստութիւն վայելել. և որովհետև դուք չէք կարող պատասխանել ձեր կեանքի ընթացքում կորցրած ամէն մի վայրկեանի համար, ուրեմն միք կորցնիլ և ոչ մի ժամ»։ Մի ազատ րոպէում դուք կարող էք մի օգտակար բան շինել։ Գործունեայ մարդը միշտ գործ կը գտնի, իսկ ծոյլը՝ և ոչ մի ժամանակ. որովհետև աշխատասէրի հանգստութեան և ծոյլի կեանքի մէջ մեծ տարբերութիւն կայ։ Շատերը կըցանկանային ապրել հանգստութեան մէջ, առանց ոչինչ աշխատանքի. այսպէս մտածողները, անկասկած կը կործանուէին. ընդ հակառակը աշխատանքը տալիս է մարդուս հարստութիւն, բաւականութիւն, առատ եկամուտ և ընդհանուր յարգանք։ Հեռացէք զուարճութիւններից, նրանք իրանք ձեր յետևից



կը վազեն։ Աշխատող գեղջկուհուն ոչինչ պակասութիւն չունի, չնայելով, որ նրա հագուստը կայանում է հասարակ կտաւից. նա ապրում է առատութեան մէջ, և բոլորը նրան յարգանքով են գլուխ խոնարհեցնում։

II. Բացի աշխատասիրութիւնը, մեզ հարկաւոր է և հաստատամտութիւն, անդադար ուշադրութիւն դարձնել մեր գործերին և միշտ վերահասու լինել։ Բնակութեան տեղը շուտ շուտ փոխելով, նոյնպէս չէք կարող երջանիկ ապրել. երեք անգամ տնափոխութեան ծախքը հաւասար է մի հրդեհից առաջացած վնասի։

Մեր փորձառու Րիչարդը ասում է. «բարի եղիր դէպի ուրիշները, փոխարէնը կըստանաս. եթէ ցանկանում ես, որ քո բոլոր գործերը ճշտութեամբ կատարուին, այն ժամանակ պարտաւոր ես դու ինքդ անես, կամ վերահասու լինես նրանց կատարողների վերայ. իսկ եթէ կուղարկես մշակներին և դու ինքդ վերահասու չես

լինի, նրանք ոչինչ չեն չինի։ Ով ցանկանում է երկրագործութեամբ պարապելով հարստանալ, նա պէտք է փոքր ի շատէ հասկացողութիւն ունենայ այդ մասին և պարտական է նոյն իսկ ինքը մշակել (կառավարել) կամ վերահասու լինել։ Շատ անգամ վերահայեցողութեամբ աւելի շատ բան է չինւում, քան թէ ձեռներով և շատ անգամ անհոգացողութեամբ բացակայ լինելն աւելի է վնասում մարդուն, քան թէ տգիտութիւնը։ Վերահասու չլինել իր ծառաների և մշակների գործերին, կընշանակէ առաջարկել իւր փողերի քսակը նրանց անօրէնութեանը։

Ներկայ ժամանակում, քանի որ մարդիկ հաւասարապէս չեն զարգացած, շատ անգամ մէկի չափազանց հաւատարմութիւնն ենթարկում է նրան դժբախտութեան. իսկ անհաւատարմութիւնը՝ ազատում է։ Ջանասէր մարդը շատ պտուղներ է քաղում. եթէ ձեզ ցանկալի է ունենալ հաւատարիմ և հնազանդ ծառաներ, ծա-



ռայեցէք ձեզ դուք ինքներդ։ Շատ անգամ ամենաչնչին պատճառներից ծնւում են դժբաղդութիւններ։—Պայտից (նալից) վեր է ընկնում մեխը, դուք նրան կորցնում էք. բայց առանց պայտի վնասւում է ձին, իսկ առանց ձիու՝ ձիաւորը, որի յետևից թշնամին հասնելով սպանում է նրան։ Բայց ինչ էր այս բոլորի պատճառը. ձիաւորի անհոգութիւնը, որ ուշք չը դարձրեց պայտից վեր ընկնող մեխին։

III. Իմ բարեկամներ, կարծեմ ես բաւական երկար խօսեցի աշխատասիրութեան և գործունէութեան մասին. ցանկալի է ինձ մի քանի խօսք ասել և «խնայողութեան» մասին, որը մի և նոյն աստիճանի հարկաւոր է, եթէ մենք ցանկանում ենք մեր աշխատանքի պտուղներն լիովին վայելել։ Այն մարդը, որ իւր եկամուտից մի մասը չըպահպանէ նեղ օրուայ համար, նա իւր բոլոր կեանքի ընթացքում աղքատութեան մէջ կ'ապրի և կըմեռնի առանց մի քանի կոպէկ ժառանգներին թողնելու։ Ով սո-

վոր է ուտել գէր պատառը, նա լղարը չի սիրել։ — Հասարակութեան մեծ մասը աղքատութեան ճանապարհը ընկաւ այն ժամանակից, երբ կանայք տնային տնտեսական գործերը թողին և ճախարակն ու ոստայնանկը փոխարինեցին թէյի և նոր մոդաների. իսկ մարդիկը՝ խոփն ու արօրն—արաղի։ Եթէ ցանկանում էք հարստանալ, սովորեցէք, գոնէ յետ ձգել ձեր եկամուտից մի ամենափոքր մասը.—որքան եկամուտ ունիք, բոլորը մի՛ք ծախսիլ, այլ ձեր ծախսերը այնպէս չափաւորեցէք, որ եկամուտից չ'աւելանայ։

Թողէք ձեր հալուստ հագուստները, շուտով կըտեսնէք, որ էլ չէք տրտնջալ ոչ ժամանակի դժուարութեան, ոչ հարկերի ծանրութեան և ոչ էլ տնային շատ և զանազան ծախսերի վերայ։ «Թղթախաղն, արբեցութիւնն և անտնտես կանայք մարդու բոլոր հարստութիւնը հաւասարեցնում են զրօյի (ոչնչի) և բազմապատկում են կարիքների և պարտքերի թիւը և այս կեր-





**ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ**

*Մահուան տասնամեակի առթիւ* (†1892 *թ. Դեկտ.* 19)



պով դիմում են դէպի յանցանք». աւելացնում է փորձառու Բիշարը. «վերոյիշեալ յանցանքներից մէկին հետեւելը. աւելի թանգ է նստում մարդուն, քան թէ երկու որբ երեխայի սննդելը»։

Դուք, շատ կարելի է, կարծում էք, որ մի փոքր քանակութեամբ թէյ, մի քանի բաժակ գինին, երբեմն մի աւելորդ բաժին կերակուրը, գեղեցիկ հագուստը, ձեր բարեկամների հետ կառքերով շրջակայքը ոչինչ դժբախտութիւն չեն պատճառել. բայց մի՛ մոռանաք, որ փոքր աղբիւրներից է գոյանում մեծ մեծ գետերը։ Պահպանեցէք ձեզ մանր ծախսերից. շատ անգամ ահագին նաւի փոքր պատառուածքից կործանւում է ամբողջ նաւը։ — Ըմասէրները աղքատանում են.—յիմարները խնջոյքներ են պատրաստում, իսկ խորամանկները նրանց ծախսով կշտանում։

Դուք, ահա զորօրինակ, հաւաքուել էք այստեղ նրա համար, որ ուտէք ուրախ և լսէք մի չնչին բան, և այդ շատ բարի և

լաւ բան էք կարծում, այն ինչ ձեր բարի կարծած բաները շատերից համար կարող է դժբախտութիւն պատճառել։

Դուք համեմատելով աճրդով վաճառուելիս ապրանքի գները վաճառանոցի գների հետ, կտեսնէք, որ արդարև աճրդախօսութեան ժամանակ շատ էժան է վաճառւում, և դուք այս բանով գրաւուելով, կըգնէք շատ չնչին բաներ. բայց որովհետև դրանք անպէտք և աւելորդ բաներ են, ուստի և բոլորովին աւելորդ է գնելը։ Մի մոռանաք փորձառու Րիչարդի խօսքը. «Եթէ սկսես անպէտք բաներ գնել, շուտով կըվաճառես պիտանիները»։ Նա խորհուրդ է տալիս բոլորովին զգուշանալ էժանութիւնից, որովհետև շատ անգամ գրաւուելով էժանութեանը՝ առնում ենք այնպիսի բաներ, որոնք բոլորովին մեզ հարկաւոր չեն. որանով մենք միայն թեթևացնում ու դատարկում ենք մեր գրպանը և աւելի վնաս ենք առնում, քան թէ օգուտ։ Շատերը այսպիսի էժան բաներ առնելով՝ սնանկա-



նում են։ «Մի՛թէ յիմարութիւն չէ» ասում է Րիչարդը, «որ մարդս իւր կոպէկներով աշխատած փողերը վճարի այսպիսի անպէտք բաների, կամ աւելի լաւ ասել, ցաւի»։ Քիչ օրինակներ չենք տեսնում, որ շատերը զրկում են իրանց ամենահարկաւոր կարիքներից, միայն նրա համար, որ իրանց կանանց զարդարեն նորաձև հագուստով. այս նպատակի համար, շատերը մինչև անգամ քաղցած են թողնում իրանց ընտանիքը։ «Մախմուրը, ատլասը և շատ այսպիսի թանկագին բաներ հանգցնում են վառարանի կրակը». (քանդում են մարդու տունը), ասում է փորձառու Րիչարդը։ Նա չընայելով, որ այդ բոլորի կարիքը զգալի չէ, և մինչև անգամ մի առանձին յարմարութիւն էլ չէ տալիս։ Այս կերպով միայն մխիթարւում են թեթևամիտ մարդիկը, որոնք զմայլելով իրանց կանանց թանկագին շորերի փայլմունքից, աշխատում են հաւատացնել իրանց, որ այդ բոլորն անպատճառ հարկաւոր է։ Այսպիսի անխոհե-

մութիւնից մարդիկ (շատ անգամ և զարգացած դասից) հասնում են աղքատութեան վերջի կէտին։ Հարկադրւում են պարտք առնել այնպիսի մարդկանցից, որոնք իրանցից նիւթականապէս շատ ստոր վիճակում էին, բայց ապահովացրել են իրանց դրութիւնը աշխատասիրութեամբ և խնայողութեամբ. այս հաստատում է նոյն փորձառու Րիշարի հետևեալ խօսքերը. «Ոտների վերայ կանգնած գիւղացին աւելի բարձր ու յարգելի է այն ազնուականից, որ սողում է ծնկների վերայ»։ Եթէ մի քանիսը պատահմամբ մի փոքր ժառանգութիւն են ստանում, «այժմ մեր բարեկենդանն է» ասում են. «էլ այսուհետև պաս չի կարող լինել.—կամ միթէ չնչին ծախսերը մեզ կը քանդեն»։ Բայց այդպիսի պարզամիտները մոռանում են, որ խաշամանից անդադար խաշը հանելով (թըթխմորը) և ոչինչ չ'աւելացնելով նրա վերայ, շուտով կարող ենք հասնել յատակին.—կամ թէ ջրի գինը այն ժամանակ միայն կարող ենք իմանալ,



երբ մեր ջրհորը կը ցամաքի—և փողի գինը այն ժամանակ՝ երբ պարտաւորուած կըլինինք փոխ առնել։ Ով սովոր է պարտք առնելու, նրա կեանքը միշտ ենթարկւում է անհանգստութեան և վտանգի։ Շատ անգամ է պատահում, երբ պարտատէրերը որոշեալ ժամանակին ցանկանում են յետ ստանալ իրանց փողերը, հազար ու մէկ անբաւականութիւններ են լսում իրանց պարտապաններից։ «Արտաքին շքեղութիւնը, ինչպէս դժբաղդութիւն է. մարդս երբէք անձնատուր չը պէտի լինի այսպիսի հաճոյքների, առանց առաջուց իմանալու իւր գրպանի դրութիւնը։ «Հպարտութիւնը» ասում է փորձառու Րիշարը, «աղքատութիւն է, որը նոյնպէս բարձր է գոռում, ինչպէս կարիքը. միայն զանազանութիւնը նրանումն է, որ առաջինի ձայնը աւելի յանդուգն է»։ Դիցուք թէ դուք առել էք մէկ լաւ բան. բայց մի և նոյն ժամանակը հարկաւոր է նրա հետ ուրիշ շատ բաներ. հարկաւոր է պահպանել առաջին ցանկու-

թիւնը, որովհետև այս շատ հեշտ է մերժելը, քան թէ հետևել կատարելու առաջին ցանկութիւնից առաջանալու պահանջները։ Այն աղքատը, որ հետևում է հարստին, նման է գորտի, որ ցանկանում է մեծութեամբ հաւասարուել ցուլի։ Մի մոռանաք առածը. «ոտդ վերմակիդ համեմատ մեկնիր»։

Այնուամենայնիւ այսպիսի անմիտ մարդիկը անպատիժ չեն մնում. եթէ նրանցից մէկը իւր արտաքին շքեղութեամբ հանդիսանում է մի հասարակութեան մէջ, բոլորը յարգում են նրան, կարծելով որ նրա ներքին յատկութիւնները ևս նոյնպէս շքեղ են. բայց երբ փոքր ի շատէ ծանօթանում են նրա գաղափարի հետ, հեռանում են. իսկ երբ բոլորովին ճանաչում են նրան և համեմատելով նրա ներքին զգացմունքը արտաքին շքեղութեան հետ, արհամարհանքով են նայում նրա վերայ և մերժում են իրանց հետ յարաբերութիւն ունենալուց։ Այս միայն մի լոկ ցանկութեան հետևանք է։



—Եւ արդարև ի՞նչ օգուտ ենք ստանում այն ցանկութիւնից, որը միայն մեզ ցոյց տալու համար ենք ծնում և որի պատճառով անչափ դժուարութիւններ ենք կրում. կազդուրո՞ւմ է նա արդեօք մեր վատ առողջութիւնը. կամ մխիթարո՞ւմ է մեր դժբախտութեան ժամանակը և կամ աւելացնո՞ւմ է արդեօք փոքր ինչ մեր համարումը։

Ո՛չ, նա միայն շարժում է մեզ դէպի նախանձ և շտապեցնում է մեր կորուստը։

Ուրեմն ասացէ՛ք խնդրեմ, յիմարութիւն չէ՞, այսպիսի չնչին նպատակների համար պարտքերի տակ ընկնելը։

Դիցուք թէ մի խանութում առաջարկում են ձեզ ապրանք և 6 ամիս ժամանակ են տալիս ձեր պարտքի վճարելուն։ Մարդուս նեղ դրութիւնը շատ անգամ իրաւունք է տալիս իրան օգուտ քաղել յարմար առիթից—հագնուիլ առանց փողի։ Իսկ դուք շատ գոհ էք լինում... Բայց մտածեցէ՛ք, թէ ինչ կլինի հետևանքը. դուք ձգեցիք ձեր ազատութիւնը ուրիշների իշ-

խանութեան տակ։ Եթէ դուք որոշեալ ժամանակին չվճարէք ձեր պարտքը, պէտք է ամաչէք ձեր պարտատիրոջ հանդիպելիս՝ և շատ կարելի է, մինչև անգամ դողաք. կսկսէք անդադար մտածել և խղճահարուել. փոքր առ փոքր կըսովորէք սուտ խօսել և կընկնէք ստախօսութեան փշոտ և զզուելի ճանապարհը։ «Ստախօսութիւնը, ասում է Ռիշարը, երկրորդ աստիճանի յանցանք է. իսկ պարտքերի մէջ մանելը՝ առաջինն»։ «Ստախօսութիւնը շրջում է պարտքերի հետ ձեռք ձեռքի տուած», աւելացնում է նա։

Մարդս ազատ ծնուելով, չըպէտք է և ոչ մի ժամանակ ենթարկի իւր ազատութիւնը ուրիշների իրաւունքին, կարմրի կամ դողայ նրանց առաջ. բայց շատ անգամ նրա սկսած գործերի ընթացքը տանում է նրան դէպի աղքատութիւն և ոչնչացնում է նրա բոլոր ազնիւ զգացմունքները։—«Դատարկ տոպրակը (ջուալը) դժուարութեամբ կըկանգնի»։ Ի՞նչ կասէիք դուք այն մարդ-



կանց, որոնք առանց պատճառի արգելէին ձեզ հագնուել մի հարուստ պարոնի կամ տիկնոջ նման, ասելով որ ձեզ կպատժենք և բանտ կը ձգենք։ Դուք անկասկած կը պատասխանէիք, որ մենք ազատ ենք և իրաւունք ունենք հագնուելու, ինչպէս և կամենանք և թէ, այդպիսի արգելք չեն կարող լինել ինքնակառավարութեան դէմ։ Ահա մի խնդիր, որը դուք չէք ցանկանում հասկանալ, թէ այն օրից, երբ ձեզ իրաւունք էր տալիս պարտքերի տակ ընկնել, ձեր ազատ կամքով ստորացնում էք ձեր ինքնասիրութիւնը, միայն նրա համար, որ շռայլութեամբ և արտաքին շքեղութեամբ փայլէք։ Ձեր պարտատէրը լիակատար իրաւունք ունի զրկել ձեզ ձեր բոլոր ազատութիւնից և բանտ ձգել տալ, կամ պահանջել, որ ծախեն ձեր բոլոր ստացուածքը, եթէ դուք ժամանակին չէք վճարի ձեր պարտքերը։

Երբ դուք պարտք էք վերառնում, վճարելու օրը ձեզ շատ հեռու է թւում, բայց

ժամանակը շատ շուտ է անցնում. իսկ պարտատիրոջ յիշողութիւնը այս մասին աւելի սուր է, քան թէ պարտապանինը։ Նրանք ժամանակից չեն թողնիլ անցնի ոչ մի օր, ոչ մի րոպէ և ոչ մի վայրկեան։ Քանի որ դուք ձեր տանը նստած ուրախութիւն կանէք, առանց մտածելու պարտքի վճարելու ժամանակի վերայ, յանկարծ ձեր պարտատէրը կըծեծի ձեր դուռը. իսկ եթէ դուք կմտածէք ձեր պարտքի վճարելու ժամանակի վերայ, որը սկզբում ձեզ շատ հեռու էր թւում, յանկարծ կըտեսնէք մօտեցած։ Օրերը անցնում են իրար յետևից և ժամանակը թռչունի պէս առաջ է սլանում։ «Մեծ պասը շատ կարճ է երևում այն մարդկանց համար, որոնք զատկին վճարելիք ունին»։

Եթէ դուք գտնւում էք այնպիսի դրութեան մէջ, որ կարող էք առանց մի քանի աւելորդ ծախսեր անելու կառավարուիլ, աւելի լաւ կլինէր, եթէ ձեր փողերը պահէիք սև օրուայ կամ ծերութեան



ժամանակի համար։ Ինչպէս արեգակը նոր ծագելիս իւր ճառագայթները չէ տարածում ամեն տեղ, նոյնպէս և մեր բախտի անիւը շատ անգամ չէ պտտւում. մարդու եկամուտը շարունակաբար և հաստատ չէ լինում. բայց կեանքի պահանջները մինչև գերեզմանը ուղեկից է լինում նրան։ «Շատ հեշտ է» ասում է Ռիչարդը, «երկու վառարան շինել, քան թէ մէկ վառարանի մէջ միշտ կրակ պահել». ևս աւելացնում է. «լաւ է առանց ընթրիքի քնել, քան թէ զարթնել պարտքով»։ —Աշխատեցէք, որքան կարող էք և խնայողութեամբ գործ դրէք, ինչ որ ունիք. այս մէկ օրէնք է, որ անագը ոսկի է դարձնում. և եթէ հետևէք այս օրէնքին, հաւատացէք, որ ոչ ձեր կեանքի կարիքները ձեզ կըծանրաբեռնեն և ոչ էլ ձեր հարկերը ձեզ կըվախեցնեն։

IV. Սիրելի բարեկամներ, թէև այս բոլորը, ինչ որ ձեզ ասացի, առողջ դատողութեան և շատ փորձերի արգասիք են, բայց դուք մի՛ մտածէք, որ մարդուս ապ-

րելու համար միայն բաւական է աշխատանքը, ինքնօգնութիւնը և խոհեմութիւնը, առանց Աստծուն փառաբանելու։ Ջերմեռանդ սրտով աղօթեցէք Աստծուն, խնդրեցէք նրանից օգնութիւն ձեր գործերի համար, և անողորմ մի՛ք լինի դէպի այն մարդիկը, որոնք իսկապէս կարօտութիւն ունին և կարօտ են ձեր օգնութեանը. օգնեցէ՛ք և մխիթարեցէ՛ք նրանց, մի՛ք մոռանալ, չարչարանք կրող Յոբին, որի պատմութիւնը գեղեցիկ նկարագրուած է Աստուածաշունչ գրքում։

Այժմ յանկանալով հրաժարուել ձեզանից, իմ բարեկամներ, բոլորովին յուսով եմ, որ իմ խօսքերը ձայն բարբառոյ յանապատի չըհամարէք. «կեանքի փորձառութիւնները ուսումնարանից բարձր է. այստեղ է միակ ուսումնարանը այն անմիտ մարդկանց համար, որոնք, թէև շատ քիչ, բայց այնուամենայնիւ մէկ բան են սովորում»։ Իրաւ, որ ճշմարիտ է Բիչարի նկատողութիւնները թէ «խորհուրդ տալը



հեշտ բան է, բայց սովորել մէկին հետևելու և կատարելու իւր խորհուրդները՝ անկարելի». բայց և պէտք է ի նկատի ունենալ այն մարդիկը, որոնք չեն լսում այսպիսի խորհուրդների, շատ անգամ ընկնում են սխալների մէջ. եթէ նրանք չլսեն բանականութեան ձայնին, շուտով նա իրան կըծանօթացնի նրանց։

Այս խօսքերից յետոյ ծերը լռեց.—բոլոր հանդիսականները ուշադրութեամբ լսում էին նրան և նրա ասածներին համակրում. բայց նրա հեռանալուց յետոյ բոլորը նրա խորհուրդներին ընդդէմ վարուեցին, ինչպէս որ սովորաբար լինում է իւրաքանչիւր քարոզից յետոյ.—Հրապարակական աճրտախօսութիւնը սկսուեց և Բիչարի քարոզները ուշադրութեամբ լսող և համակրող պարոնները իրար գլուխ կոտրելով առաջ էին շտապում և վաճառուելիք բաների գները աւելացնում։

Ես նկատեցի միայն, որ քարոզիչը ուշադրութեամբ կարդացել էր իմ օրացոյցը և

ճիշտ ըմբռնել այն բոլոր բարոյական խրատները, որոնք ես հաւաքել էի 25 տարուայ ընթացքում։ Այս անընդհատ ծանօթութիւնները և քաղուածքը գուցէ շատերին ձանձրալի լինէր բացի այն հեղինակից, որի խրատներից օգուտ է քաղուած։ Իմ անձնասիրութիւնս բաւականին գոհ էր, թէև այդ բոլորի մէկ տասներորդ մասն հազիւ ինձ էր պատկանում. իսկ մնացածները ես իմ աշխատասիրութեամբ սեփականացրել էի ուրիշ փորձառու մարդկանց քարոզներ լսելով և նրանց շարադրութիւնները կարդալով։—Ինչ և իցէ ծերունու քարոզները մեծ տպաւորութիւն գործեց ինձ վերայ և ես նրանից այն օգուտն ստացայ, որ թէև մտածում էի ինձ համար նոր հագուստ առնել այդ աճրտախօսութեան ժամանակ և հէնց այդ նպատակով էլ գնացել էի, բայց մտածեցի, որ դեռ իմ հին շորերով կարող եմ կառավարուիլ—ու չառայ։

Եթէ դուք էլ, սիրելի կարդացողներ,



հետևէք փորձառու Ռիչարդի խորհուրդներին և աւելորդ ծախսեր չանէք, ինչպէս և ես չարեցի, հաւատացէք, որ լաւ կապրէք։



## XIV. ԳԱՐԱԳ ԺԱՄԵՐԻ ՉՈՒԲՐԺԱԼԻՔ

| | | | |
|---|---|---|---|
| 7 | 5 | 3 | 11 |
| 9 | 6 | 10 | 8 |
| 12 | 2 | 1 | 4 |

### ՀԱՐՑԵՐ

Ա. Որդի կունենամ և քանի՞ հատ։
Բ. Երբ կվերադառնայ օտարութիւնից։
Գ. Հաւատա՞մ կնոջս։
Դ. Հաւատա՞մ ամուսնուս։
Ե. Ե՞րբ բախտաւոր կլինիմ։
Զ. Ե՞րբ կհասնեմ նպատակիս։
Է. Զինուոր կգնա՞մ թէ ոչ։
Ը. Ի՞նչ պիտի լինի իմ վերջը։



Թ. Այս փորձանքից ե՞րբ կազատուիմ։
Ժ. Ի՞նչ է գուշակում երազս։
ԺԱ. Յաջող կլինի՞ արդեօք մտածածս գործը։
ԺԲ. Կորածը կգտնուի՞ արդեօք։
ԺԳ. Ընդունե՞մ արդեօք ինձ առաջարկած տեղը կամ պաշտօնը։
ԺԴ. Ընտանեկան կեանքում բախտաւոր կլինե՞մ։
ԺԵ. Կհարստանա՞մ արդեօք։
ԺԶ. Լաւ վիճակի կարժանանա՞ն իմ որդիքը։
ԺԷ. Չէ՞ խաբում արդեօք նա ինձ։
ԺԸ. Կստանա՞մ արդեօք համաձայնութիւն իմ առաջարկութեան համար։
ԺԹ. Մինչև քանի՞ տարի կապրեմ։
Ի. Ի՞նչ է պատահելու ինձ։

### ԲԱՆԱԼԻ

Ընտրեցէք հարցերից որը կամենաք և մտքերդ պահեցէք նորա ձախ կողմում դրուած տառը։ Թւականների մէջ մտով նշանակեցէք որև է թւանշան (աւելի լաւ

է աչքերդ խփած) ապա պատասխանների մէջ գտէք մտքում պահած տառի համապատասխան սիւնեակը և այնտեղ կարդացէք ձեր նշանակած թւանշանի դէմ գրըւած պատասխանը։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

## Ա.

1. Ցոյցդ մի կարիր, կունենաս։
2. Այնքան ունենաս, որ գլուխը մոլորուես։
3. Կունենաս, բայց քանիսը Աստուած գիտէ։
4. Բարեգործութիւն արա, որդի չես ունենայ։
5. Մի տղայ և երկու աղջիկ։
6. Կունենաս 12 տղայ։
7. Կունենաս 12 աղջիկ բոլորն էլ տգեղ։
8. Ուշ է արդէն, առաջ պէտք է մտածէիր այդ մասին։
9. Մի տղայ և այն էլ շատ բախտաւոր։
10. Չորս աղջիկ, չորսն էլ տանը կմնան։
11. Չես ունենայ։



12. Կունենաս և որդոցովդ երջանիկ կլինես։

## Բ.

1. Այսօր, ընդառաջ գնայ։
2. Շատ ուշ։
3. Շատ շուտով։
4. Վախենաս չասես, թէ երբ պիտի կորչես։
5. Երկու շաբաթից յետոյ։
6. Մի ամիս յետոյ։
7. Եթէ այսօր չեկաւ, 3 տարի յետոյ։
8. Շատ շուտով և այն յաջողութեամբ։
9. Մի տարի էլ պէտք է սպասէք։
10. Վերջին նամակից երկու օր յետոյ կգայ։
11. Իրանից չէ կախուած, զուր տեղը մի սպասէք։
12. Ճանապարհին է։

## Գ.

1. Լաւ կանես չհաւատաս։
2. Հաւատա՛, նա սրտանց պաշտում է քեզ։
3. Մի հաւատա, կնոջ սիրտը օդաչափի պէս փոփոխական է։

4. Կուզես մի հաւատայ, նա որ միշտ հաւատացնում է քեզ։
5. Հաւատայ, նա աւելի անկեղծ է, քան թէ դու։
6. Վա՜յն եկաւ քեզ, երբ հաւատացիր։
7. Հաւատայ և երջանիկ կլինես։
8. Եթէ ուզում ես կեանքդ դառնացնել, հաւատայ։
9. Հաւատայ, բայց ոչ ամեն դէպքում։
10. Հաւատայ, բայց և երբեմն փորձել մի ծուլանար։
11. Հաւատալ կնոջը, նշանակում է չը ճանաչել թէ ինչ է կինը։
12. Սրտա՜նց հաւատայ, կինը հաւատք է։

Գ.

1. Հաւատայ և չես փոշմանի։
2. Մի՛ հաւատար։
3. Հաւատայ, նա սրտանց է քեզ սիրում։
4. Նա քեզ պիտի խաբէ դու նրան, վա՜յ վերջը խաբուողին։
5. Եթէ ուզում ես կեանքդ դառնացնել, հաւատայ։



6. Պարտական ես հաւատալու, յիշիր երդումդ։
7. Եթէ ասէ ձիւնը սպիտակ է, մի՛ հաւատայ։
8. Նա իւր գործը գիտէ, կուզես մի՛ հաւատայ։
9. Մի՛ հաւատար։
10. Հաւատայ և ձեր կեանքը երջանիկ կլինի։
11. Կասկածել անգամ մի մտածիր, հաւատայ սրտանց։
12. Օրը քեզ նման քանիսին է խաբում։

Դ.

1. Մի տարի յետոյ, երբ գործիդ եղանակը փոխես։
2. Երբէք մի՛ յուսա։
3. Ո՞վ է կատարեալ բախտաւոր. զո՛հ եղիր վիճակիցդ։
4. Միայն քնածդ ժամանակ, երբ դարդ ու հոգս մոռացած կլինես։
5. Բախտաւոր լինելու համար հարկաւոր է առողջ միտք և ազնիւ սիրտ. ունի՞ս այդ ամենը։

6. Ոչ երբէք և դրա պատճառը դու ես։
7. Համբերութիւն, համբերութիւն և միայն համբերութիւն։
8. Ո՞ր մահկանացուն այս երկրիս վերայ երջանիկ ժամեր վայելել կրնայ։
9. Երբ ամուսնացնես թոռներիդ։
10. Երբ բարեգործութիւն անես և աղքատներին սէր ցոյց տաս։
11. Շատ շուտով միայն կարճատև կլինի։
12. Թէև մի փոքր ուշ, բայց երկարատև բախտաւորութիւն կլինի։

Զ.

1. Երբ բնաւորութեանդ կոպտութիւնը թողնես։
2. Չես հասնի, ծանր տեղդ նստիր։
3. Երբ մի հարուստի հետ ամուսնանաս։
4. Յիշիր գիւղականի այն խօսքերը — «ես կամենում էի, կամենում էի այնքան, մինչև որ հզօր դարձայ»։
5. Միայն դու չես, որ կէս ճանապարհին կմնաս։



6. Քեզանից է կախուած, կամեցիր և կը հասնես։
7. Դրա համար խելք ու շնորհք է հարկաւոր, ունի՞ս արդեօք դու։
8. Մի՛ վախենար, տոկուն եղիր։
9. Չես հասնի, մի էլ մտածիր։
10. Եկող շաբաթ, ձգտիր։
11. Շատ շուտով։
12. Քիչը գնաց, շատը մնաց։

Է.

1. Չես գնայ
2. Կգնաս և այդ քեզ օգուտ է։
3. Կհանես բարձր № բայց կգնաս։
4. Չես գնայ, բարձր № հանելուդ համար։
5. Կգնաս, բայց սպատուով յետ կգաս։
6. Չես գնայ, շատ մի վախենայ։
7. Ես չգնամ, դու չգնաս, ապա ո՞վ պիտի գնայ։
8. Կհանես 2 № բայց չես գնայ։
9. Չափդ պակաս է, չես գնայ։
10. Քեզ տանեն իրանց պատիժ անեն։

11. Ոչ, որովհետև անընդունակ ես ծառա-յութեան։
12. Քո չգիտեցած հիւանդութեամբ կա-զատուես։

Ը.

1. Շատ բախտաւոր կլինես։
2. Մեծ դժբախտութիւն կպատահի։
3. Մեծ հարստութեան կտիրանաս։
4. Մեծ բարեգործ կդառնաս։
5. Որդոցդ մօտ երջանիկ կապրես։
6. Հող էիր և ի հող պիտի դառնաս։
7. Ապագան ոչ ոքի յայտնի չէ։
8. Բարեգործութիւն արա, թէ չէ ամե-նաթշուառ օրի կմնաս։
9. Պատերի տակը պիտի մնաս։
10. Չորս անգամ պիտի ամուսնանաս։
11. Անչափ հարստութեան տէր պիտի լի-նիս։
12. Այդ ուղղութեամբ շարունակես, քեզ դժողքում էլ տեղ չի լինի։

Թ.

1. Շատ շուտով, մի յուսահատուիր։



2. Մի տարի յետոյ։
3. Շատը գնաց, քիչը մնաց։
4. Չես ազատուիր, համբերիր և տար։
5. Երբ աչքի ընկնող բարի գործ անես։
6. Երբ սրտանց զղջաս։
7. Դեռ նոր ես ընկել… ու՞ր ես…
8. Մի շաբաթ յետոյ։
9. Համբերիր վերջինն է, ուրիշ փորձանք չես տեսնելու։
10. Գոհ եղիր դրանով, թէ չէ աւելի սար-սափելին կպատահի։
11. Անպատճառ կազատուես, թէ ե՞րբ, այդ Աստուած գիտէ։
12. Կազատուես, գնա քէֆ արա։

Ժ.

1. Աչքի ընկնող ոչինչ։
2. Կտեսնուես քո սիրելու հետ, որին սի-րում ես։
3. Ընտանեկան կռիւ։
4. Եթէ ամուրի ես, կնշանուես, եթէ ոչ, որդի կունենաս։
5. Քո ամենամօտ բարեկամի մահ։

6. Նրազդ չի կատարւում։
7. Լօկ տխրութիւն, ուրիշ ոչինչ։
8. Ուրախութեան արտասուք պիտի թափես։
9. Նպատակդ պիտի կատարուի։
10 Օտարական կվերադառնայ։
11. Պատուի և յարգանքի պիտի հասնես։
12. Երազդ սուտ է։

ԺԱ.

1. Կասկածելի է յաջողութիւնը։
2. Այո, Աստուած կանչիր և սկսիր։
3. Ո՛չ, հեռու կաց։
4. Մի՞թէ կարող ես դու լաւ բան մտածել։
5. Վայն եկաւ այն գործին, որի յաջողութիւնը այստեղ ես փնտրում։
6. Շատ յաջող միայն շտապիր։
7. Աստուած գիտէ։
8. Ունեցածդ էլ հետը կկորցնես։
9. Քաջութիւն ունեցիր. ինչ ես կասկածում։
10. Ո՛չ, ու, հազար անգամ ո՛չ։
11. Ինչ կասկածում ես, հա՛, հա՛։
12. Եթէ միայն խարդախութիւն չանես։



ԺԲ.

1. Դժուար, եթէ միայն գտնողը բերէ տայ։
2. Այո և շատ շուտով։
3. Եթէ այստեղ ես փնտրում, երբէք։
4. Այո կգտնուի, միայն կէսը։
5. Աչքիդ առաջն է դու նրան չես տեսնում։
6. Յոյսդ կտրիր, նորից գնելու նայիր։
7. Վնաս չունի, գտնողը քեզանից աղքատ է։
8. Ուշ,- շատ անպատճառ կգտնուի։
9. Եթէ երկու օրից չգտար, էլ մի յուսար։
10. Կգտնուի միայն երեք շաբաթ յետոյ։
11. Չի գտնուի։
12. Եթէ գտնուի էլ, դարձեալ կկորչի։

ԺԳ.

1. Ընդունիր և չես փոշմանի։
2. Հրաժարուես աւելի լաւ է։
3. Հրաժարուիր աւելի լաւ բաղդ է սպասում քեզ։
4. Ընդունիր, էլ ո՞ւր ես ձեռքիցդ բաց թողնում։
5. Ընդունիր և շատ բախտաւոր կլինես։

6. Ընդունեցիր թէ չէ, մի մեծ դժբախտութիւն պիտի պատահի:
7. Ընդունիր, ձեռքիցդ բաց մի թողնի:
8. Կուզես ընդունիր, քեզ օգուտ չունի:
9. Գոյութիւն պահելու դար է, ձեռքիցդ բաց մի թողնի:
10. Ոչ, ոչ, հազար անգամ ոչ:
11. Սրտիդ հարցրու:
12. Հա, հա, գանկալ տարար:

ԺԴ.

1. Այո, և շատ բախտաւոր:
2. Ընտանեկան բախտաւորութիւն քչերին է վիճակուած:
3. Այնքան բախտաւոր, որ օրը հազար անգամ մահ կխնդրես:
4. Ադամը դրախտում բաղդաւոր չեղաւ, ուր մնաց դու:
5. Այո, և իմացիր, որ քչերին է վիճակուած:
6. Մտքիցդ հանիր. բախտաւորութիւն աշխարհում գոյութիւն չունի:



7. Կլինես, եթէ միայն բնաւորութիւնդ փոխես:
8. Բախտաւոր ես ու կաս. էլ ինչ է քեզ պակաս:
9. Շատ մեծ դժբախտութեան կհանդիպես:
10. Ընտանեկան կեանքում բախտաւորութիւնը երազ է, երազ:
11. Շատ բախտաւոր կլինես. միայն մտանաւոր վերջը պիտի դժբախտանաս:
12. Այո, մի կասկածիր:

ԺԵ.

1. Գո՛րծիդ նայիր, բոլորն էլ հարուստ չեն կարող լինել:
2. Կհարստանաս, բայց երանի կտաս աղքատութեանը:
3. Աստուած հոգևորից չզրկէ. մարմնաւորը ինչ պէտք է:
4. Հոգով և ոչ փողով:
5. Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ:
6. Եթէ ամուսնանաս. եթէ ամուսնացած ես, երբ որդիք ունենաս:
7. Անպատճառ և շատ շուտով:

8. Կհարստանաս բայց կդժբախտանաս։
9. Եթէ գանձ էլ գտնես, դարձեալ չես հարստանայ։
10. Որդոցով և ոչ փողով։
11. Եթէ ապրես կհալատանաս։
12. Վա՜յ քեզ, որ փուչ մարմնիդ յետևից ես ընկել։

### ԺԶ.

1. Այո, շատ երջանիկ վիճակի։
2. Առաջ դաստիարակիր յետոյ ապագայի մասին մտածիր։
3. Որդու ապագան ծնողներից է կախուած, կատարիր առաջ ծնողական պարտքդ։
4. Այո և յայտնի բարեգործի անուն կժառանգես։
5. Ոչ, ոչ, բոլորովին մի յուսայ։
6. Շատ լաւ վիճակի։
7. Այնպիսի վիճակի կհասնես, որ մտքիցդ անգամ չի անցնի։
8. Ինչ սուտ ասեմ, ոչ մի արժանաւոր վիճակի։
9. Դէ, հա՛, հա՛, պահլա մի տանի։



10. Ապագան ոչ ոքի յայտնի չէ։
11. Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ։
12. Տղայոցդ նայիր և շատ անգամ լաւ վիճակ սպասիր։

### ԺԷ.

1. Չի խաբում, հանգիստ եղիր։
2. Ոչ դու առաջինն ես և ոչ էլ վերջինը։
3. Եթէ դու հաւատաս նորան, նա քեզ չի խաբի։
4. Էլ ինչ ես հարցնում, դու նորան ես խաբում նա էլ քեզ։
5. Անպատճառ և այն օրական մի քանի անգամ։
6. Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ։
7. Երնէկ նրան քեզ էլ որ չխաբէ, բաս ո՞ւմ խաբէ։
8. Ո՛չ, էլ երկրորդ անգամ չհարցնես, թէ չէ կփոշմանես։
9. Հեռու կաց. նրանից հեռացողը Աստծուն կմօտենայ։
10. Քեզ նման շատերին է ճանապարհ դրել։

11. Հա, հա, գահլայ տալար։
12. Ոչ միայն չի խաբում, այլ և սրտանց նուիրուած է քեզ։

## ԺԸ.

1. Այո, միայն փոքր ուշ։
2. Անպատճառ, բայց վերջը կփոշմանես
3. Ոչ, մի յուսար։
4. Պէտք է աշխատես դրա համար աշխատանք է հարկաւոր։
5. Չես ստանայ։
6. Կստանաս, բոլորովին մի կասկածիր։
7. Ինչի սուտ ասեմ, չոր մերժում կստանաս։
8. Կստանաս և շատ շուտով։
9. Ենթադրենք ստացար, ինչ օգուտ վերջը պիտի զզջաս։
10. Եթէ երկու օրից չստացար, էլ չես ստանայ։
11. Մէկը կայ որ խառնում է աշխատիր նրան հեռացնել։
12. Ի՞նչ կասկածում ես եղել. չես ստանայ դէ գնա։



## ԺԹ.

1. Ապագան ոչ ոքի յայտնի չէ։
2. Դժուար, բարեգործութիւն արա։
3. Էլի 25 տարի և 6 ամիս։
4. Եթէ մի տարի յետոյ չմեռնես, կապրես էլի 40 տարի։
5. Էլի այնքան, որքան ապրել ես։
6. Եթէ արաղի թասին մնաս բարև ասես, կապրես էլի 20 տարի։
7. Մինչև խորին ծերութիւն։
8. Մինչև թոռդ նշանելը։
9. Թէև շատ կապրես, բայց անօգուտ կեանք կլինի։
10. Մինչև 12 օրով և 4 թասով սեղան նստես։
11. Այնքան կապրես, որ դու էլ կզզուես։
12. Յիշիր գիտնականի այն խօսքերը — «Խելացի մարդու մի օրը յիմարի ամբողջ կեանքից հաճելի է»։

## Ի.

1. Առ այժմ ներկայի համար մտածիր։
2. Աչքի ընկնող ոչինչ։

3. Եթէ խելքդ գլուխդ պահես կհարստանաս։
4. Մեծ բախտաւորութեան կարժանանաս բայց կարճատև կլինի։
5. Վտանգաւոր կ'հիւանդանաս, եթէ զգոյշ չլինես։
6. Պատերի տակը պիտի մնաս, ուրիշ ինչ պիտի լինի։
7. Քաղցածութիւնից պիտի կախուես։
8. Պիտի ստանաս յայտնի բարեգործի անուն։
9. Կլինես մեծ հարստութեան տէր։
10. Սաստիկ անյաջողութեան մէջ պիտի ընկնես։
11. Պիտի ասես. «Աւա՜ղ իմ անցեալ փառքերին»։
12. Կատարեալ երջանկութիւն։



# XV. ԵՐԱԶԱՀԱՆ

Այն երևոյթները, որոնք ներկայանում են երազում պարզ և կենդանի ձևով, առանց որև իցէ խանգարմունքի և շփոթութիւնների, չեն ընդհատւում ուրիշ ցնորական երևոյթներով կամ երևակայութեամբ, և պատահում են առաւօտեան արշալոյսին և արեգակի ծագման ժամանակ, աւելի ուղիղ են համարւում։

Երազները աւելի հաւանական և ուղիղ են համարւում ամառը և ձմեռը, իսկ գարնանը և աշնանը կասկածելի և ոչ այնքան ուղիղ և այդ նրա համար, որ տարուայ վերջին երկու եղանակներին, ինչպէս օդը նոյնպէս և եղանակները անհաստատ են և փոփոխական, մրրկալի և հողմային և երազների գոյութեան ու ստեղծման համար ոչ այնքան յարմար։

Առաւօտեան արշալոյսին և նոյն իսկ արեգակի ծագման ժամանակ եղած երազները նրա համար են աւելի ուղիղ գի-

չերուաններից, որովհետև այդ միջոցներում մարդկային ոգին աւելի հանգիստ, ոգին անդորր է, իսկ ուղեղը մաքուր և վատ գոլորշիներից ազատ։

---

**Երազների կատարման ժամանակը.** — Այն երազները, որոնք պատահում են գիշերուայ ժամը 4-ից մինչև առաւօտ, կատարւում են կամ 10 օրուայ, կամ 10 ամսուայ և կամ մի տարուայ ընթացքում։

Այն երազները, որոնք պատահում են գիշերուայ 12 ժամից սկսած մինչև 4-րդ ժամը, կատարւում են առհասարակ 3-րդ, 4-րդ կամ 5-րդ տարում։

Այն երազները, որոնք լինում են երեկոյեան 9 ժամից մինչև կէս գիշեր, այսինքն ժամը 1-ը, կատարւում են ոչ առաջ քան 9, 10 կամ 15 տարուայ ընթացքում։

Կիւրակի վաղ առաւօտ պատահած երազները կամ կատարւում են նոյն օրը կամ երբէք։



Այն երազները, որոնք պատահում են օրուայ մէջ, առհասարակ կատարւում են կամ 7 ժամից յետոյ կամ երբէք։

---

## Դանիէլ մարգարէի բացատրութիւնը երազների մասին

### Ա.

Աստուած երազում տեսնելը՝ լաւ է, ամեն չարերից կազատուի. թէ աղքատ է կը հարստանայ, թէ հիւանդ է կառողջանայ։ Աստուած տան մէջ տեսնելը՝ տան նորոգութիւն է։

Աստղ տեսնելը լաւ է. եթէ տան մէջ տեսնես՝ բարեկամ կաւելանայ, օտար տեղ լինիս, յաջողութեամբ կը վերադառնաս։ Շատ աստղեր տեսնելը՝ ճանապարհ գնալ է և շահ։

Ասպար առնելը՝ պատիւ է։

Արեգակ տեսնելը՝ փառք, պատիւ կամ կախ է։

Աքաղաղ մորթած՝ բարի է և կռուի նշան։

Ագռաւներ, թշնամիներդ կը յարձակուին քեզ վրայ։

Աթոռ տեսնելը՝ մեծութիւն է։

Աթոռ նստելը՝ բարձրութիւն է։

Ալևոր իրան տեսնելը՝ հարստութիւն է։

Ալիւրը շահ է և ոյժ. ալիւրն ամանով տեսնելը՝ մուրազ է.

Ականջը, աղջիկ է, կամ աչքալոյս։ Ականջ կտրելը վնաս է։

Աղաւնի տեսնելը՝ շնորհք է։

Աղուէս տեսնելը՝ ահ ու երկիւղ է, թէ որսաս՝ թշնամուդ կը յաղթես։ Աղուէսը, թէ մարդուց փախչի իր պարտականը կը փախչի։ Աղուէսի հետ կռիւ անողը՝ իր օգտին կռիւ կ'անի։

Աղջիկ իր ծոցում տեսնելը՝ խնդութիւն է։ Փոքր աղջիկ տեսնելը շատ օգուտ է։

Աղբիւր տեսնելը՝ շատ բաներից օգտուելու նշան է. աղբիւրից լուացուելն՝ օգուտ է. աղբիւրից ջուր վերցնելը վատ է. աղբիւրից ջուր խմելը՝ շնորհք է և բարի։



Աղ ու անանուխ տեսնելը՝ բարի և անուշ խօսք է. միմիայն աղ տեսնելը կսկիծ է. սպիտակ աղը՝ փող և օգուտ է. սև աղը՝ վատ խօսք է և տրտմութիւն։

Աղի ձուկը՝ կսկիծ է և հոգս։

Աղեղ տեսնելը՝ մեծ զրոյց է։

Ամպերի ճայթմունք լսելը՝ բարի չէ։

Իրեն աղեղնաւոր տեսնելը՝ թշնամանող լեզու է։

Աղիւս հանելը՝ տան շինութիւն է և լաւ։

Աղքատին բան բաշխելը բարի և օգուտ է։

Ամանաթ առնել և պահելը՝ շահ է։

Այծ տեսնելը՝ ճանապարհ է։

Այրուած հանդերձը՝ (շորը) մահուան վնաս և երկիւղ է։ Այրուած և աւերուած տեսնել իր տունը՝ վնաս է։

Անձրև ժամանակ տեսնելը՝ բարի է։

Անդաստան տեսնելն՝ աշխատանք է։

Անապատում նստելը՝ նեղութիւն է։

Աչքեր տեսնելը՝ շատ հարստութիւն է։ Մեծ աչք ունենալ՝ երկարակեցութիւն է. աչք հանել, կնոջ կամ որդու մահ է։

Ապարանջանը, նեղութիւն և հոգս է։

Առիւծ տեսնելը՝ թագաւոր, իշխան և կամ մեծ մարդ է։

Եթէ երկու առիւծ իրար հետ կռուին՝ երկու թագաւոր կամ երկու մարդ կը կռուին։

Եթէ դու առիւծի վրայ նստած լինես՝ պարոնութիւն (աղայութիւն) կ'անես։ Եթէ առիւծը դէմդ դուրս գայ՝ մեծ մարդուց երկիւղ կը հասնի քեզ։

Առու տեսնելը զանձ և օգուտ է։

Ատամ.—Եթէ բոլոր ատամներդ թափուեն՝ շատ գանձ կը գտնես։ Եթէ առաջին ատամդ ընկնի՝ սգի կը հանդիպես և ճանապարհ կը գնաս. Առաջին ատամները հանելը որդոց մահ է գուշակում։ Ներքին ատամներ հանելը՝ տրտմութիւն է, իսկ թէվերինը հանես, ազգականներից մէկը կը մեռնի։ Մնացած ատամները՝ հիւանդութիւն է։

Արեգակ տեսնելը՝ թագաւոր է։ Արեգակը իր ձեռքում տեսնելը՝ պարոնութիւն է տեսնողի համար։ Խաւար արեգակ տեսնելը՝ տեսնողի համար չար է։ Երկնքից ընկած արեգակ տեսնելը՝ թագաւորի մահ է։



Արեգակ տեսնելը՝ նեղութիւն է. արևն ամպի տակ տեսնելը՝ նեղութիւն կամ պայծառութիւն է։

Արծաթը նեղութիւն է։ Արմաւը՝ շատ բարի և անոյշ խօսք է։ Արմաւենին զաւակ և ուրախութիւն է։

Արիւն թափելը՝ մեծ վնաս է։

Արիւն կամ արիւն առնելը՝ շնորհք է։

Արծիւ տեսնելը՝ աւագութիւն է։ Արծուի վրայ նստելը՝ պարոնութիւն է։ Արծուի հետ կռուելը կամ խփելը՝ մեծ մարդկանց հետ կռուելու նշան է։ Եթէ արծիւը քեզ խփի՝ մի պարոնից զէնք կ'ստանաս։

Արջ տեսնելը տգէտ մարդու խօսք է։ Արջից հալածուելը կռուից կողոպտուես կամ մեծից զգոյշ կաց։

Ամեն գայլ գազան՝ թշնամի է։

Աւետարանը հալալ մուրազ է։

Աւազը որ ձեռդ առնես, մեծ մարդուց բան կստանաս։

Աւազակ որ տեսնես զգուշացիր կռուից։

## Բ.

Բարձրանալ երազում և վայր ընկնել մէկի ձեռքով՝ մահուան վնաս է։

Բարձր տեղերի վրայ քայլելը մեծութեան հասնել է։

Բարձր տեղից ընկնելը վնաս է։

Բարև տալը կռիւ է։ Բաղանիքը, հոգս է։ Բաղանիք եթէ գնաս, խարէութեան մէջ կընկնես։ Բաղանիքից եթէ դուրս գաս, հոգսերից կազատուես։ Բաղանիքում լուացուելը ռոճիկի և մեծ նեղութիւն է։

Բադ տեսնելը, մեծ մարդ է։

Բագ շինելը կամ հիմք ձգելը բարութիւն է։

Բահը լեզու է։

Բամբակը արդարութիւն է։

Բանջարը շահ է։

Բերդ որ տեսնես, թշնամիներից մոտ ճշմարիտ դուրս կը գաս։ Բերդ մտնելը, պարիսպ և ամրութիւն է։ Բերդի մէջ նեղութիւնից ազատուել է։

Բերան լուանալը, ռոճիկի պակասել է։



Բիր տեսնես կամ առնես, եղբայր կամ որդի է։ Բիր կոտրելը, եղբօր կամ ազգականի մահ է։

Բլուր տեսնելը, երկրի խաղաղութիւն է։

Բու տեսնելը, նեղութիւն է։

Բուրվառ տեսնելը կամ առնելը լաւ չէ, կռիւ է։

Բուրդ.—Սպիտակ բուրդ տեսնելը կամ առնելը, առողջութիւն և օգուտ է։ Սև բուրդը սուգ ու լաց է։

Բոլիկ իրեն տեսնելը, գէնք կը գայ իր վրայ։

Բարատ իրան տեսնելը, գանձի շատանալ, մեծութիւն և շահ է։

Բողկ ուտելը, առողջութիւն և օգուտ է։

## Գ.

Գառներ տեսնելը մեծ շահ է։ Գառներ մորթելը լաւ չէ. գառներ լուանալը գէնք և արտմութիւն է։

Գազան տեսնելը, առանց վնասի կռիւ և երկիւղ է։ Գազանի խաղալը թշնամու հաշտութիւն է, իսկ փախչելը խաղաղութիւն։

Գանձ տեսնել կամ առնելը շահ է։

Գարին բաղդ կամ բաժին է։

Գայլ սպանելը թշնամու յաղթել է. գայլի վրայ նստելը նեղութիւն է։

Գաւազան տեսնելը թշնամու դէմ պաշտպանուել է։ Գաւազանը ձեռքիդ լաւ է, որդի կամ մեծ շահ է։

Գաւաթ բռնելը, զաւակի (ունենալու) ուրախութիւն է։

Գետ անցնելը ձի հեծնել է։ Ցամաք ու պարզ գետին մօտիկ տալը, առատութիւն է, պղտորը լռութիւն է. գետում լուացուելը նեղութիւն է։ Գետի վերևից ներքև գնալը պարտութիւն է։

Գերի տեսնելը նեղութիւն է. իրեն գերի տեսնելը, մեծութիւն և օգուտ է։

Գերի ճանապարհ գնալ, նեղութիւն է։

Գերանը որ կոտրուի, տանտէր կմեռնի։

Գերեզման բանալը վնաս է. իրան գերեզմանում տեսնելը պատասխանի ենթարկուել կամ բանտ ընկնել է։

Գէշ հոտը, վատ խօսք է։



Գինի խմել կամ գնել, ոյժ և շահ է։

Գիսաւոր աստղը մեծութիւն և պատիւ է։

Գիրք կարդալը ժողով է և նեղութիւն։

Գիր գրելը բարի և մուրազ է։

Գլուխը կտրած ձեռին առնելը մեծ գանձ գտնել է. գլխին դեղ քսելը անուշ խօսք է. գլուխ ածիլել տալը, նեղութիւնից ազատուել է. ուրիշների գլուխն ածիլելը ցաւից ազատուել է. գլուխ լուանալը կամ գլխով բան տեսնելը վէնք է։ Սպիտակ գլուխը յանկարծակի մահ է։

Գլխատած իրան տեսնելը, մեծ վնաս է։

Գլխոր տեսնելը ցոյց է տալիս ցնծութիւն և աղքատութիւն։

Գնդակ խաղալը, մեծի համար լաւ է, իսկ փոքր մարդուն վատ։

Գոմէշը գետի մէջ տեսնելը, բարի զրոյց է նշանակում։

Գոմ շինելն ուրախութիւն և շահ է։

Գոյնզգոյն հալաւը, ուրախութիւն է։

Գորտի ձայն լսելը, ուրախութեան լուր է։

Գորտ եթէ սպանես, հաւատացեալ մար-

դու հետ հաշտութիւն կանես։

Գլխարկ ծածկելը, հարկիք է։

Գրաւական հանելը իւր տանից մահու վնաս է։

Գրող տեսնելը մահուան մօտենալ է։

Գրիչ և կաղամարը, խելք կամ ճանապարհ է։ Գրչամանը, կին է։

Դ.

Դանակ տեսնել կամ գնել, լաւ չէ, կամ վատ լեզուն խափանում է։

Դաշտից որ դուրս գաս, ազատութիւն է։

Դատաւորն Աստուած է և դրութիւնդ կլաւանայ։

Դատաստանը, մեղաց քննութիւն է։

Դարպաս շինել կամ տեսնելը, հարուստ կնիկ է։ Դարպաս լայնացնելը պարոնութիւն է։ Դարպաս փակելը մեծ մարդուց վնասուել է։

Դարբինը մեծ մարդ է։ Դարբնութիւն թէ ինքդ անես, լաւ տանտէր կը լինիս։

Դարբնի հարուածը, ամենը բարի է։

Դևը, նեղութիւն և մեղքի նշան է։



Դդում ցանելը, ջերմ, իսկ ուտելը, հիւանդութիւն է։

Դիակը, բարի գրոյց է։

Դիպակ տեսնել կամ հագնելը, մեծ պատիւ է։

Դմակ տեսնել կամ ուտելը հիւանդութիւն է։

Դուռը, պատիւ է և մեծ մարդու հետ ծանօթանալ։ Դուռ բանալը, իւր բաղձի բացուիլ և իւր կամքի կատարուիլն է։ Դուռ ձգելը, կործանումն է։ Դուռ կոտրելը, մահու նշան է։ Դուռը դուրս գալը, լաւ չէ։

Դրամ տեսնել կամ ժողովելը ազահութիւն է։

Ե.

Եզը նստած տեսնել, մեծ աւետիս է կամ զուգակից սիրելին կը գայ։ Եզան միս ուտելը լաւ է, բայց ոմանք ասում են թէ նեղութիւն է։ Եզների կռուելը թշնամի է։ Եզը մորթել, մահու վնաս է։ Եզի միս ուտելը բարի է։

Եղնիկ տանը տեսնելը, սիրելին կը գայ։

Եղունգ ունենալը, աղքատութիւն է։

Եկեղեցի տեսնել կամ շինելը, փառք է։

Եկեղեցի գնալը ազատութիւն է։

Եղջերուն երկրի նեղութիւն է։

Երկինք բարձրանալը, մեծ պատիւ է։

Երկիրը խնդութիւն է։

Երկանք տեսնել կամ աղալը անհանգստութիւն է։

Երկաթ տեսնել կամ գնելը, արտմութիւն և շատ վատ է։

Երակ կտրելը, մահու վնաս է։ Երակից արիւն առնելը, սրբութիւն է։

Երես լուանալը, պէն է։ Դեղին երեսը մեղք է. կարմիր երեսը գործը լաւ կերթայ։ Գեղեցիկ երեսը, մեծ փառք է։

Երազ պատմելը երազում շատ լաւ է։

Երէցը յարութիւն առնելիս, հին գլոյց է։ Մեռած աւագ երէցին կենդանացած տեսնելը, մեծ գլոյցի նորոգուել է։ Երէցին մեռած տեսնել, մեծ գլոյցի խափանումն է։

Զ.

Զանգակի ձայն լսելը, ուրախութիւն է։



Զաֆրանը հիւանդութիւն է։ Զաֆրանով կերակուրը, լաւ է։

Զենելը – մորթելը, մեծ նեղութիւն է։

Զինուորը, արտմութիւն է։

Զմրութը լաւ է։

Զնդանը մեծ հոգս և սուգ է։

Զուռնան կամ զուռնի ձայնը որ լսես, անձրև կամ կախ է։

Զրոյց անելը, նեղութիւն է։

Զրահը, ապանութիւն է։ Զրահ հագնելը, զէն է։

Է.

Էշը շատ նեղութիւն է. սպիտակ էշին հեծած կամ բեռնած, բարի է և պատիւ։

Ը.

Ընկոյզ ժողովելը, լաւ չէ։

Թ.

Թագաւորին ողջունելը, փառք է։

Թամբ շինողը, խրատարար է։

Թանաք եփելը լաւ է։ Թանաք վերևից թափելը, վատ խօսք է։

Թարախոտ կրան տեսնելը շահ է և հաւատութիւն։

Թագնուած կրան տեսնելը, բարի է։

Թեւաւոր կրան տեսնելը, հողինների հանդիպել է։

Թզի ծառը, լիքը մարդ է.—Թուզը (կանաչ) տեսնել կամ ուտելը վնաս է։ Թուզը (չոր) ուտելը, շահ է։

Թուխ կրան տեսնելը, մեծութիւն է։

Թռչելը, ուրիշ տեղ գնալ է։ Թռչել կը տուրից, այլ կին առնել է։

Թռչել բարձրանալու համար, լաւութեան հասնել է. Թռչելիս ուրիշ երկրում մեծութիւն կստանայ։

Թռչունի քեզ մերձենալը, մի անձն երանի է տալիս քեզ. Թռչուն արձակելը, բարութիւն է. Թռչունի փախչելը, վնաս է։

Թռչունների կռուելը, վնաս է։ Թռչունի հետը խաղալը Թշնամուց սիրուելու նշան է։

Ժ.

Ժամատունը զարդարած տեսնելը, արքայութեան արժանանալ է։



Ժամ գնալը, կեանքդ բարի լինել է։

Ժամատանը աղօթելը, լաւ բան անել է։

Ժամհարը վատ դրութեան հասնել է։

Ժամացոյցը օգուտ է։

Լ.

Լոյսը խաղաղութիւն է. լոյսը հանգած տրտմութիւն է։

Լուսին և արեգակ առաւօտեան տեսնելը ազգին վնաս է։

Լուսնի աստղը, խիստ շահ է.—կարմիր լուսինը, վնաս է։

Խաւար լուսինը թագաւորի մահ է. երկու լուսին տեսնելը, թագաւորներ իրար դէմ կը վերկենան։

Լուն՝ առճիկ է։

Լուծը (եզների) բարի է։

Լեառն (բարձր) որ տեսնես, ազատութիւն է։

Խ.

Խան կամ սուլթան տեսնելը, անչափ լաւ է։

Խաչակնքել երազում մեծ պատիւ է։

Խաչը, չարչարանք է։

Խաւարը, նեղութիւն է

Խուեարը, հիւանդութիւն է։

Խաղողը, անձրև և ցնորք է. —սպիտակ խաղողը, խնդալ է. սև լաւ է. ժողոված խաղողը, գանձ է։

Խեցեղէն աման բռնելը, ուրախութիւն է։

Խմոր ուտելը, շահ է։

Խնդալը լաւ չէ։

Խնձորը տղայ է, իսկ ուտելը շահ։

Խնձոր առնելը բարի համբաւ է. խնձորի ծառը մեծ մարդ է։

Խուլը և համրը, օգուտ է։

Խունկ ծխելը, ապրանք և անոյշ խօսք է։

Խորոված միս ուտելը, օգուտ է։

Խոզը մահ է կամ այլազգի. խոզի միս ուտելը, ազգականների մահ է։

Խոտը լաւ մարդ է. խոտ ժողովելը, պատիւ է և փառք։

## Ծ.

Ծաղկեայ անդաստանը, շահ և ուրախութիւն է. ծաղկեղն անհանգստութիւն է.



ծաղիկ քաղելը, կին առնել է. ծաղկելը բարի է։

Ծաղկած ծառը, պտղով ծառը բարի է. ծառ կտրելը կամ այրելը, վնաս է. ծառը եթէ ծխի, լաւ չէ. ծառի տերև թափուելը, արիւնհեղութիւն է. ծառ վայր ձգելը մարդու մահ է. մեծ ծառ կտրելը, մեծ մարդու մեռնել է. ծառի վրայ նստելը և մանգալը փառք է. կանաչ ծառը, գանձ է. չոր ծառը, տրտմութիւն է. ծառ զուգելը կին է։

Ծամ (հիւս) կտրելը, բաժանումն է։

Ծառան ունետիք և ուրախութիւն է։

Ծարաւելը, լաւ չէ։

Ծանր բան շալակելը, մեծ մեղք է։

Ծիծաղելը, տրտմութիւն է։

Ծիծը, տղայ կամ մեծութիւն է։

Ծնանելը, (կնոջ) մեծ շահի գալ է։

Ծունր գնելը, առ Աստուած յոյս է։

Ծովը պղտոր, նեղութիւն է. ցամաք ծովը, աշխարհի լիութիւն է. ծովում լուացուելը, օգուտ է. ծով մտնելը, թշնամիներից ազատուել է. ծովը որ մարդու ներս

քաշի, գողի ձեռքով սպանուիլ է նշանակում։ Ծովակի վրայ նստելը, զուարթութիւն է. ծովից դուրս գալը, պատիւ է և ազատութիւն, չը դուրս գալը, մեծ վնաս է։

Ծերութեան ժամանակ իրան մանուկ տեսնելը. կեանքի աւելանալն է. իրան ծեր տեսնելը մանկութեան ժամանակ, նոյնպէս կեանքի աւելանալն է։

Կ.

Կամուրջ շինելը, շատ լաւ է։

Կառք նստելը, մեծ պատիւ է։

Կայծակը, խռովութիւն է։

Կարկուտը, երկրի նեղութիւն է։

Կարասը, նեղութիւն է։

Կաղամբի տակ հանելը, վնաս է։

Կենդանի իրան գերեզմանի մէջ տեսնելը մեծ զրոյց է։

Կին առնելը, մահուան վնաս է. կնոջ հետ խօսելը, տրտմութիւն է. մազերն արձակած կինը, մահու վնաս է. գեղեցիկ զարդարած կինը, երկիր է կամ քաղաք. կնոջ մազ կարելը, շատ վնաս է. կնոջ նա-



յելը, բարի և լաւ է։

Կիտրոնը, անոյշ խօսք է.

Կոյս իրան տեսնելը, խիստ շահ է. կոյսի հետ խօսելը տրտմութիւն է. կոյսի հետ հաց ուտելը, լաւ է։

Կուժը, որդի է. ջրով կուժը, բոլորովին բարի է.

Կորեկ տանը տեսնելը կամ ուտելը լիութիւն է.

Կրակ ձգելը, մահ է և սով.

Կտաւ հանելը, լաւ չէ.

Կօշիկ տանը տեսնել կամ հագնելը, ճանապարհ է։

Հ.

Հաց տեսնելը բարի է և լաւ։

Հաւը ձուի վրայ, անսպասելի շնորհք է. հաւ սիրամարգ մեծ իշխան է. հաւի խօսելը, մարդու կեանքից զրկուելու նշան է։

Հաղորդ առնելը մարդու ծեծ է.

Հակ քաղելը, ուրախութիւն է.

Հարսանիքը, տրտմութիւն է.

Հայրապետը, մեծ զրոյց է.

Հայր.—Մեռած հօրը կենդանացած տեսնելը, մեծ շահ է.

Հալաւ այրած տեսնելը, կնոջից շահուել է.

Հանդերձ կորցնելը, վնաս է.

Հեռաւոր տեղ իրան տեսնել կամ ուրիշ մէկին, շահ է և բարի.

Հիմք ձգելը, հարստութիւն է.

Հիւանդը, նեղութիւն է.

Հող վեր առնելը, նեղութիւն է.

Հում միս ուտելը մեծ զրոյց է.

Հոր փորելը, շատ նեղութիւն է:

## Ձ.

Ձի. Սպիտակ կամ սև ձի նստելը, բարի և մուրազ է. վազող ձի նստելը խիստ լաւ է. սև ձի կամ ջորի նստելը մեծամեծներից շահ ստանալ է: Ձին սարում տեսնելը, մեծութեան հասնելու նշան է.

Ձեռը լուանալ, բարի է. ձեռից ճրագ բռնած որդի լինի քեզ.

Ձէթ եփելը մուրազ և լաւ է.

Ձու տեսնել կամ ժողովելը, կռիւ է.



Ձոր տեսնել կամ անցնելը, նեղութիւնից կ'ազատուես.

Ձուկը, չար լեզու է.—Ջրից հանես, ամպ, ձիւն կամ ջերմ կ'լինի։

## Ղ.

Ղամպար վառելը, բարի է:

## Ճ.

Ճանապարհ գնալն ու գալը բարի է.

Ճուտն երկայն ճանապարհ է:

Ճառ գրած տեսնել կամ լսել, հոգս է.

Ճնճղուկ տեսնել կամ բռնելը, բարի է.

Ճրագ վառած, ծածուկ գործ կ'յայտնուի. անցած ճրագը տան կործանումն է.

## Մ.

Մատանին, իշխանութիւն է. մատանին կոտրած, վնաս է. մատանին կորցնես, կինդ կամ սիրելիդ կ'մեռնի. երկու մատանի ունենալը, երկու կին կ'առնես.

Մարգարիտը, մեծութեան նշան է.

Մարդու ոսկոր ուտելը, բանտ մտնել է.

Մեխեր ժողովելը լեզուներ են:

Մեծահասակ իրան տեսնելը, փառք է։

Մեռել.—Իրան մեռած տեսնելը, շատ ապրել է. մեռելն թէ խօսի զգոյշ կաց մի հաւատայ. մեռել թաղելը շփոթուել է. մեռելը գերեզմանում տեսնելը, չարը կ'խափանուի. շատ մեռելներ տեսնելը, թշնամիներդ կ'յարձակուեն։

Մեղր ուտելը մեղք է և սրտնեղութիւն։

Մետաքս տեսնելը, օգուտ է.

Միս տեսնել կամ ուտելը հիւանդութիւն է, իսկ խորոված միս ուտելը, շահ.

Միրգ ուտելը հիւանդութիւն է.

Մոմը վառած, ուրախութիւն և որդի է.

Մորեխը, հոգս է և աշխարհի վնաս.

Մութը, վնաս է և չար.

Մուկը, վնաս է և չար.

Մորուքով իրան տեսնելը, շնորհք է։

Ն.

Նախիրը որ գեղը գնայ, աւազ է.

Նապաստակը, իրեն աղայ լինի.

Նաւ.—Նաւորդ լինելը, գլոյց դուրս գայ. ոսկէ կամ արծաթի նաւը, բարի է. նաւ



նստես, շատ կ'ապրես. նաւերի խումբ տեսնես, շահ կ'գայ քեզ. նաւը զանձով նեղութիւն է. նաւ այրելը երկրի վնաս է. կոտրած նաւը, մահ է.

Նուռը, օտարներից շահուել է.

Նստել և ողբալը, շատ նեղութիւն է.

Շ.

Շալիկ սպիտակ տեսնել կամ կարել, արդարութիւն է. սևը, տրտմութիւն է, աղտոտը մեղք է.

Շինութիւն կառուցանելը բարութիւն է, քանդելը վնաս.

Շիշ իւղով, ռոճիկ և շահ է.

Շորեր (նոր) ուրախութիւն և շնորհք է։ Շորեր գոյնզգոյն վնաս է. սև շորերը, աւագ մարդ կմեռնի։ Շորեր կորցնելը վնաս է.

Շներին իրար հետ կռուիլը, վատ է. շունը որ հաչէ կամ կծէ չար լեզու է և չար մարդուց պէտք է զգոյշ լինես։

Ո.

Ոսկին կամ արծաթը, շահ է, ոսկէ խընձորը, պատիւ է.

Ոչխարը, ձմեռ է և ցուրտ. սև ոչխարը, սուգ և տրտմութիւն է. ոչխարը ճանապարհին հարստութիւն է.

Ողբալը, շատ նեղութիւն է.

Ուղտը, պարոն է. երկու ուղտի կռուելը իշխաններ կ'կռուեն. էգ ուղտ նստելը հիւանդութիւն է.

Որս գնալը, բարի է։

Չ.

Չամիչը, շատ վնաս է.

Չաման, կռիւ և աղաղակ է.

Չանկը, տրտմութիւն է.

Չիրը, սակաւ շահ է.

Չուխայ.—կանանչ չուխան, հարստութիւն է. սևը, տրտմութիւն։

Պ.

Պատարագը կեանք է.

Պարտէզ տնկելը, լաւ է.

Պղպեղը, կսկիծ է. պղպեղ ուտելը թշնամիներից պատրաստ կայ.

Պսակ արծաթէ, հիւանդութիւն է. փշից պսակ շինելը, մեծ շահ է. քարից շինած պսակը, մեծութիւն է.



Պսակուիլը, լաւ է, յաճախ կռիւ է։

Ջ.

Ջաղաց շինելը, մեծութիւն է. քանդելը, չինութիւն է. ջաղացի աղաւնը հիւանդութիւն է.

Ջայլամը, նեղութիւնից կ'ազատուես.

Ջուրը մաքուր խմելը, լաւ է պղտոր ջուր տեսնելը կամ խմելը, տրտմութիւն է. տանը մէջ ջուր տեսնելը, լաւ չէ. գնացող ջուրը, բարի է. գետից ջուր վեր առնելը, վնաս է. աղբիւրիցը, բարի է։

Ռ.

Ռեհանի ծաղիկը, բարի է.

Ռումբը կանգնած, մեծութիւն և պատիւ է. ձեռքին ռումբ բռնելը, ճանապարհ է և երկիր.

Ռուս տեսնելը, մեծ հակառակութիւն է։

Ս.

Սագը, մեծ մարդ է.

Սաղ ուտելը, հիւանդութիւն է։

Սալորը, առողջութիւն է։

Սանդուղ (կանգնած) մեծութիւն է

Սանր բռնելը, զէնք է։

Սենեակ քանդելը, կնոջից բաժանուիլ է։

Սեխը, լաւ է, ուտելը հիւանդութիւն։

Սիսեռը, բարի է։

Սիւնը, նեղութիւն և կռիւ է։

Սխտորը, կսկիծ է։

Սոխը, կսկիծ է. ուտելը, հիւանդութիւն։

Սուգ անելը, ուրախութիւն է։

Սուլթան տեսնելը, անչափ ցաւ է։

## Վ.

Վախեցած իրան տեսնել, օգուտ է։

Վանք և աբեղայ, նեղութիւն է։

Վառած մէկին տեսնել վնաս է. իրան վառած տեսնելը հարստութիւն է։

Վարդը, կին կ'առնես. վարդ քաղելը, բարի է։

Վերմակը, հարուստ կին է։

Վիշապը, մեծութիւն կամ վնաս է։



## Տ.

Տաճար զարդարած, բարի է. տաճար այրելը թշնամիքդ կը կռուին.

Տաճիկը, թշնամիների յարձակումն է.

Տախտը, մեծութիւն է. տախտը դիպակով, բարի է. տախտը կանաչ, ցաւ է.

Տանձ ուտելը, հիւանդութիւն է.

Տառեխ ձուկը, ճանապարհ է.

Տիկը, տրտմութիւն է.

Տղայի գիրկն առնելը, ցաւ է.

Տուն շինելը, շատ բարի է. տուն քանդելը, վատ է.

## Ց.

Ցեցը, լեզու է. ցեց հանելը, նեղութիւն կամ լաւ է.

Ցեխը, վնաս և տրտմութիւն է.

Ցորենը ցնորք է։

## Փ.

Փայտը, շատ բարի է.

Փող ածելը, մեծութիւն է.

Փուշ քաղելը. թշնամու կորուստ է.

Փոխինձ ուտելը, զէնք է։

**Ք.**

Քաղաք մտնելը, բարի է.
Քար ձգելը վնաս է, ժողովելը լաւ է.
Քահանայից խաչ առնելը, վիշտ է։

**Օ.**

Օձի հետ խօսելը այնպիսի բան անել է, որ ամբողջ աշխարհը կը զարմանայ. անկողնի վերայ օձ տեսնելը կին առնել է.
Օձին անկողնում սպանելը, կնոջ մահ է.
օձը տանը տեսնելը, կնոջ թշնամանալն է.
Օղի խմելը, ուրախութիւն է։

## ԼՈՒՍՆԻ ԵՐԱԶՑՈՅՑ

Լուսնի 1, 3, 5, 9, 13, 18, 19, 22, 26, 30 օրն - երազն ի բարին կատարի.
» 2,10,12, 16, 28, երազն 3 օրն կատ.
» 8—երազն ութ օրն կատարի.
» 23, երազն երեսուն օրն կատարի.
» 14, երազն քառասուն օրն կատարի.
» 11, 15, 17 - երազն յօրն կատարի.
» 6, երազն ի տարին կատարի.
» 29, երազն լաւ է.
» 4,7,20,21,24,25,27, երազն սուտ է։



# ԳԷՈՐԳ ՍԱՆՈՅԵԱՆԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ

ընդունում են տպագրութեան համար զանազան գրքեր, բրօշիւրներ, այցետոմսեր և այլ ուրիշ տպարանական պատուէրներ:

Կան պատրաստի Ծննդեան և Զատկի համար շնորհաւորական տոմսակներ:

Տպարանում ի միջի այլոց վաճառւում են հետևեալ գրքերը.

1) Տաղեր ու խաղեր. ժողովրդական երգերի հարուստ ժողովածու. գինն է 60 կ.
2) ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ—Պապիկ և Թոռնիկ . . . . . . . . . 60 կ.
3) » » Խաչի ճառ 30 կ.
4) » » Մարգարիտ արքայութեան երկնից . . . . 30 կ.
5) Դիօգինէս (պատկերազարդ). . 25 կ.
6) Եաշլի-Փիդան . . . . . . . 10 կ.
7) Բառարան ծոցի (Ռուս.-Հայ.) . 30 կ.
8) Հայ աշուղներ . . . . . . . 30 կ.
9) Քերական կամ այբբենարան . 5 կ.
10) Գ. Մոճոռեան—Բանաստեղծութ. 25 կ.
11) » Սրտի վէրքեր . 15 կ.

Շուտով լոյս կտեսնի Աշղ-Ղարիբի հէքեաթը պատկերազարդ, հայերէն և տաճկերէն խաղերով:

Դիմել՝ Александрополь, типографія К. С. Саноянца.

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

---

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

**ԴՊՏԻ ՕՐԱՑՈՅՑ**

*Հարուստ յաւելուածով*

---

*Դիմել՝*

Александрополь,

Карапету Апинянцъ

*կամ*

Типографія К. Саноянца.

*Գումարով գնողներին լինում է զիջում:*